

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ.

ԹԻՒ Դ. — ՇՐՋԱՆ Ե. 1872 ՏԱՐԻ Դ. — ԱՊՐԻԼ 30

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ԳԱՍԱՍԱՑՈՒԹԻՒՆ ԿՐՕՆԻ.

(Շարունակութիւն և վերջ)։

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ՈՒՍՈՒՄՔ.

Գ. Սորան յաջորդող երրորդ շրջանը չորրորդի հետ միասին, որ սահմանուած է վերջին երկու տարիների համար, յատկապէս գործ ունին Աստուածաշնչի ուսման հետ։ Երրորդ շրջանում աւանդվում են Սուրբ Գրչից հատուածները. իսկ չորրորդումը ուսուցանում են նոյն իսկ Աստուածաշունչը իւր վերայ։ Ուր որ արդէն ասած է Սուրբ գրքից քաղուած առնելը, այն տեղ ուսուցիչը նշանակում է աշակերտաց համար Աստուածաշնչի աւելի դիւրին հատուածները, այս ինքն՝ ինքն է առնում այն՝ ինչ որ պէտք է առնել քաղուածոյների հեղինակը։ Աստուածաշնչի ուսման այս կերպով ուսուցանելու յատկութիւնը կերպարանք է առնում անցեալ շրջանների համեմատութիւնից. աշակերտին աստիճան առ աստիճան տանելով դէպ ի Աստուածաշնչի պատմութեանց հասկացողութիւնը, մշակելով այդ պատմութիւնները իւրեանց փոխադարձ կապակցութիւնների և նոյն իսկ աշակերտի կեանքի մէջ։

Ա. Այս նպատակի համար՝ Աստուածաշնչի պատմութիւնը շարունակվում է մի աւելի ընդարձակ չափով, այնպէս որ նորա զանազան պատմութիւնները միաւորուած լինում են Յիսուսի յայտնութեան գլխաւոր պատմութեան. դուրս է երևում Հին Կտակարանի մէջ կրօնի սկզբնական բողբոջը և նորա զերազանցութիւնը հեթանոսութեան յառաջ. կենդանի նկարներով պատկերանում է մարդկութեան բարոյական անկումը, որի վերականգնելուն կարևոր եղաւ Յիսուսի շնորհաւոր յայտնութիւնը և նորա սուրբ արիւնը, ինչպէս նորա յայտնի դուրս երևեցան քրիստոնէից կեանքի մէջ։ Այսպիսի եղանա-

կաւ Աստուածաշնչի պատմութիւնը եկեղեցական պատմութեան կարգն անցնելով յարաբերութիւն է ստանում և աշխարհային պատմութեան հետ: Դարձեալ համեմատութիւն է անվում բոլոր պատմական անձանց մէջ, և երեխաների հոգւոյ դրութիւնը լուսաւորվում և ուղղութիւն է ստանում: Կրօնական և բարոյական ճշմարտութիւնների եզրակացութիւնը, որ քաղվում է օրինակներից՝ լինում է մի պատրաստութիւն շուտով սկսանելի հաւատոյ ուսման: Դարձեալ շարունակվում և աւելի բարձրաստիճանի է հասնում անցքերը ընդհանուր հայեացքի տակ առնելը, և չէ ընդհատվում Սուրբ Գրքերից օրինակների յառաջերութիւնը:

Է. Աստուածաշնչի քաղուածները չը պէտք է սահմանափակվին միմիայն պատմական նիւթով, այլ պէտք է ուղղուած լինին դէպ ի այն ճշմարտութիւնքը, որոնց վերայ հիմնվում է պատմութիւնը: Այս առաւելապէս վերաբերում է Նոր Կտակարանին — Փրկչի խօսքերին և առակներին: Սոցանից փոքր ի շատէ դիւրինները ընդունվում են այս շրջանի մէջ և բացատրվում: Սոցա խորին իմաստը պէտք է թողնել երեխաների ապագայ հասակի համար, բայց աշակերտի ուղղակի պարտքն է իմանալ թէ՝ ի՞նչ է թողվում իւր համար ապագայում ուսանելու, և թէ եթէ կարելի է ինքն ըստ ինքեան մտաբերել նրանց ժամանակին: Ի Քրիստոսի առակներից ի հարկէ շատ սակաւները պէտք է թողվին այժմ նոցա դժուարութեան համար, բայց Փրկչի խօսքերից էլ շատերը, մանաւանդ նրանք՝ որոնք վերաբերվում են Աստուծոյ արքայութեան նմանութիւններին, որովհետև այն խօսքերը կպարզուին միայն Յուդայի թագաւորութեան կործանումը պատմելու ժամանակը:

Գ. Նոյնպէս երրորդ շրջանի նիւթերը շատ և շատ առատ են, բայց նոցա մշակումը դժուարին է: Աշակերտները արդէն գտնվում են այն հասակի մէջ, երբ աշխարհը իւր հրապուրանքներով զօրեղապէս ներգործում է նոցա վերայ. ուստի և նոքա արդէն ոչ այնքան հնազանդութեամբ հաւատում և հետևում են իւրեանց ուսուցչի խօսքին. նորա ազդեցութիւնը շատ և շատ թուլանում է կողմնակի ազդեցութիւններով: Ահա այս տեղ նշանաւոր է պահպանել նոցա մէջ բարի սերմերը, որպէս զի նոքա մինչև իւրեանց արմատաւորելը չէորանային արեգակնային խորշակից, կամ թէ որ չխեղդուէին նոքա վատթար բոյսերով. այս նպատակին կարելի չէ հասանել ստիպելով, որ նա որքան կարելի է շատ անդիր անէ: Թէև ապագայ հասակում նրան ախորժելի կլինի կրել իւր հասկացողութեան մէջ Աստուածաշնչի ասացուածներ և երգերի դանձը, սակայն փոքր՝ բայց յաճախ գործադրուած դանձը աւելի թանկագին է քան թէ մեծը և անգործադրելին: Ուսուցիչը իւր բոլոր ջանք ի գործ պէտք է դնէ նորա համար, որ արմատացնէ աշակերտի հոգւոյ մէջ այնպիսի բարձր համարումն Սրբազան գրուածոց և կրօնի մասին, որ նա կուսանի ակամայ, կամ հասարակաւ կարգը պահպանելու մտքով. ինչ տեղ արդելուած է Աստուածաշնչի տպեալ հաւաքածուների գործադրութիւնը, այն տեղ յատկապէս ուսուցչին հարկաւոր է առանձին կարողութիւն ընտրել Աստուածաշնչից հատ-

ւածներ ընթերցանութեան համար և կապ հաստատել նոցա մէջ: Առանց այսպիսի ընտրութիւն առնելու Աստուածաշնչէ ընթերցման համար՝ հարկաւոր կըլինէր բաւական շատ ժամանակ. կարելի չէր լինիլ բովանդակութիւնների խառնուածքի ներմուծանել մի որպիսի և իցէ մանկավարժական կարգ, և կանհետանար նոյն իսկ գրաւոր ականութիւնը. այս պատճառաւ շատ հարկաւոր է կարողանալ հաւաքել ընթերցանութեան համար նրանցից աւելի հետաքրքրականը՝ աւելի խրատականը և ամենահասկանալին, և ապա ի բաց թողուածները լրացուցանել համառօտ և պարզ բառերով. նոյնպէս և զանց առնել նոցա ըստ բովանդակութեան և ըստ տեսակին նկատելի բոլոր անյարմարութիւնները. ինչ որ ամեն հանգամանքներում անպատշաճ են ընթերցանութեան՝ պէտք է անցնել համառօտապէս: Այսպիսի եղանակաւ կարող կլինիս ծանօթացնել երիտասարդներին ամբողջ սրբազան պատմութեան հետ:

Մի քանի ուսուցիչներ աշխատում են Աստուածաշնչէ այս կամ այն պարզ պատմութիւնների, առաւելապէս Քրիստոնէական Վարդապետութեան հրահանգների ցամաքութիւնը մեղմացնել իւրեանց կողմանէ աշխարհական պատմութիւններով, մանաւանդ թէ խրատական բովանդակութիւններով. կան այնպէս ամբողջ ժողովածուներ քրիստոնէական պատմութիւնների ասուածների. մենք յարգում ենք այս տեղ բարի դիտաւորութիւնը, և չենք ասում, որ պէտք է մերժել այդպիսի դրքերը, սակայն առ հասարակ սկսալ ենք համարում այդ հնարքը. Աստուածաշունչ պատմութիւնների հետ այդպիսի պատմութիւններ յաւելացնելը նուազեցնում է առաջինների յարգը, որոնք յայտնի են իւրեանց անարուեստ բնականութիւնով, մինչդեռ ինչպէս նոքա իւրեանց վիպասանութեամբ ներկայացրած անցքերում՝ նմանապէս սոքա ևս գրաւում են ընթերցողի երևակայութիւնը: Արօնական երկար պատմութիւնները համարեա միշտ ձանձրութիւն են պատճառում, և երբեմն ևս ընդհակառակն զարթուցանում են մոլեռանդութիւն: Վերոյիշեալ հաւաքածոյ պատմութիւնների մի պակասութիւնը ևս նոցա չափազանց խստութիւնն է. մինակարգրութիւնը մոռացնելով միւսին, նոցանից ոչ մինը չէ տպաւորվում երեխայի հոգւոյ մէջ ամրապէս: Այց սաստիկ յանդիմանութեան են արժանի այն աշխարհական պատմութիւնները իւրեանց ստուգութեան վերաբերութեամբ. հազիւ թէ մինքը հեղինակը կարողանայ երաշխաւորել գոնէ նոցանից մի քանիսի ճշմարտութեան համար. ի հարկէ այս ստուգութիւնը մենք չենք էլ պահանջում բանաստեղծական գրուածներից. ճշմարիտն ասել, այդպիսի պատմուածները միւս բոլորից պիտանացու են: Նրանք առաջարկում են մեզ ներկայ ժամանակումս պատահած մի աքանչելի անցից պատմութիւն առանց ստոյգ և արժանահաւատ ապացուցի, մենք պէտք է հարցնենք, թէ՝ ինչպէս կարելի է համեմատել առաքելական հրամանի հետ: ‘‘Սիրելիք, ամենայն հոգւոյ մի՛ հաւատայք, այլ փորձեցէ՛ք զհոգիս, թէ յԱստուծոյ իցեն,, (Ա. Յով. Գ. 1). ինչ որ պատմում են քարոզիչները իւրեանց տպագրեալ քարոզների մէջ, այն չէ կարելի

ընդունել իբրև զուտ ճշմարտութիւն, և հաւասարել Աստուածաշնչի պատմութիւններին։ Այդպիսի պատմութիւններից շատերը յայտնի է, որ ծագում են ինքնասիրութիւնից։ Այդպիսի պատմութիւնների ընտրողութիւնը պէտք է լինի ըզգուշութեամբ և ըստ ճաշակի, որովհետև դասատուութեան մէջ անվայել են անտեղի դատարկաբանութիւնները մանաւանդ կրօնականի մէջ։

Պ. Իսկ Աստուածաշնչում կարդացած տեղերի բացատրութեան համար պէտք է ասել, որ ինչպէս ամենազգոյշ կերպով հատուածների ընտրութեան ժամանակը չէր կարելի ի բաց թողնել և դժուարահասկանալիները, նոյնպէս և այստեղ պէտք է պահպանուի, և այն մեծ ճշդութեամբ, մեկնութեան սովորական կանոնները՝ ամենից յառաջ պէտք է կարդալ ուղղղ ձայնահարութեամբ, որովհետև սա զգալի ազգեցութիւն ունի մտքի վերայ։ Հատանգամ այս յարաբերութեամբ ուսուցչի կողմից ցոյց տուած մի փոքրիկ ուղղութիւնը աւելի օգտաւէտ է քան թէ անտեղի երկարաբանութիւնը, որը առհասարակ մեկնութեան անտանելի պակասութիւնն է. գլխաւոր գործը պէտք է լինի բնագրի անընդմիջաբար տպաւորութիւնը աշակերտի հոգւոյ մէջ. բայց այս իսկ անհետանում է թարգմանութեան ժամանակ ոմանց մեկնաբանների անտեղի երկարաբանութիւնը, որը ուրիշ օգուտ չունի բաց ի բացատրելի նիւթոյ զօրեղ և գեղեցիկ միտքերը խանգարելուց անհասկանալի խօսքերով. իսկ ամենից աւելի վատը է քարոզչական վարմունքը դէպ ի այն աշակերտները, որոնք տակաւին չեն զարգացած մտաւորապէս։ Մեկնութեան դասատուական եղանակների անյարմարութիւնները բաց ի բնագիրը անհասկանալի կացուցանելուց՝ աշակերտներին էս հասուցանում են մինչ ի յետին բթամտութիւն. որպէս զի Աստուածաշնչի մեկնութիւնները չձանձրացնեն երեխային, հարկաւոր է յաճախ փոխակերպել նոցա պատմողական եղանակը և ձևը ըստ յարմարութեան։ Առհասարակ պէտք է կրօնի դասատուութեան ժամանակը նայել ձանձրութեան վերայ իբրև մի մեծագոյն թշնամւոյ վրայ. հետաքրքրութիւնը աշակերտաց մէջ պահպանելու համար պիտոյ է ուսուցիչը կարողանայ ամեն մի վերացական տեղեկութիւն ներկայացնել տեսառապէս, և այս պատճառաւ հասարակաց հասկացողութեան համար գործ դնէ ամենայարմարը և ամենաընդհարը այն օրինակներից, որոնք կարող են յառաջ բերուիլ։ Աւելի խրատական են նոյն իսկ Աստուածաշնչի օրինակները. նոքա ազնիւ են, նոքա բղխում են սուրբ աղբիւրից և համապատասխանում են բացատրելի նիւթոյն, և զօրեղ կերպով գրգռում են աշակերտին միջամուխ լինել այդ պատմութեանց մէջ։ Որպէս զի ուսուցիչը կարողանայ բացատրել համառօտ և ճիշդ, պիտոյ է ի հարկէ՝ նա ինքը նախ հասկանայ բնագրի լիակատար միտքը. ով հմուտ չէ սորա մէջ, նա կուտակում է միմեանց վերայ շատ բառեր, և անհետ յաւելուածներով միայն մթնացնում է բնագրի պարզութիւնը։ Եւ որչափ այսպիսի անպատրաստ և անխորհուրդ երկարաբանութիւններ պատահում է մեզ լսել ոչ միայն ուսումնարաններում, այլ և եկեղեցւոյ մէջ

անգամ. եթէ որ այսպիսի մարդիքը համեստութիւնից դռնէ ստիպեալ զսպէին իւրեանց լեզուն այսպիսի անպատրաստ խօսելուց, մի՝ որ անյայտ կմնար իւրեանց ակարութիւնը, և միւս՝ որ չէին շփոթել և ուրիշներին և։ Այն բնագիրը, որը ձեռ հասկանում, կարելի է նորա բացատրութիւնը թողնել. բայց նորան խանգարելուց ղկնի ինչպէս պէտք է ուղղես գործը. հարկաւոր է կարգաւորել մի քանի աստիճաններ և նրանցով տանել աշակերտներին մինչ ի կատարեալ հասկացողութիւնը դրուածքի։ Ինչ որ այսօր նոցա համար դժուար է թվում, այն պահիր վաղուան համար։

Վերաստացեալները ըստ մեծի մասին վերաբերվում է Պապմական, Ղևոնդեան և հնաբօսական նկատողութիւններին, որոնցով մեր ուսումնականները կամենալով պարծել, ընդհակառակն շատ անգամ ցուցանում են իւրեանց մանկավարժութեան անընդունակութիւնը։ Այս օրինակ մեկնութիւնները չեն ներգործում առհասարակ բնագրի ներքին մտքի վերայ, այլ ընդհակառակն չատ են քաշվում ունկընդրի ուշադրութիւնը գլխաւոր գործից։ Կարելի է հետաքրքիր երևույթ այս մասին առաջարկած հարցմունքներին պատասխանել; այնպէս և կարելի է կրկնութեան կամ կարդացած անցածների քաղուածքի ժամանակ՝ նրան մասնաւոր տեղեկութիւն տալու համար նոյն օրինակ նկատողութիւններ անել։ Այլ եթէ խորամուխ լինինք բնագրի իսկական մտքին՝ անտեղի են այսպիսի կողմնակի նկատմունքները։ Ո. ո՞ր է գտնվում Աբրհա*) աշխարհը,

Աեռեալ ծովը Միջերկրականից ցածե՞ թէ ոչ. Պարսից որ թագաւորը անուանեցաւ Ընգասփիրոս ևլն. ևլն։ Այլ աւելի օտարոտի է մի քանի կրօնուսոյցների և այն սովորութիւնը, որ իւրեանց դասերի հետ խառնում են և լեզուաքննական հետազօտութիւններ. յայտնի բան է, որ դժուարութիւնները պէտք է դիւրացնել օրինակական դարձուածները հասարակաց շինել, բայց դորա հետ միասին որոնել և բառերի արմատները. կրօնի դասի հետ խառնել և բառաքննութիւն, այնպէս և ուղղագրական նկատմունք, այդ բոլորովին անտեղի է մինչև անգամ ցաւալի հարցասեր հոգւոյ համար։

Իսկ ի՞նչ տեղ գործածել Ա-եփեսոյ երկրի և դորա նման օժանդակ գիրքերը, որ ամենահարկաւորն է Աստուածաշնչի ուսման համար, նորա պէտք է Աստուածաշնչի նշանաւոր տեղերը կարդալու ժամանակը օրնել. եթէ աշակերտը դիտէ թէ՝ այժմ իւր գործն է կրօնի գալոց դասերի պատրաստութիւնը, հապա նա միմեանց հետ չի շփոթել երկու գործերը։ Նա կը ջանայ որոշել շինուածքի սեռմը տանիցը։ Մենք խորհուրդ չենք տալ առանձին դասեր նշանակել Աստուածաշնչի աշխարհագրութեան համար, որովհետև այսպիսի դէպքերում նորա դասատուները առհասարակ աւելորդաբար անցուցանում են ժամանակը. բայց ի կարևոր իսկական նիւթից պարապում են և աւելորդներով, և դասատուութիւնը իւր կրօնական նշանակութիւնից դուրս գալով կորուսանում է Աստուածաշնչի ուսման յարգը։ Այս պատճառաւ աւելի լաւ է մասն առ մասն բաժանել և իւրաքանչիւր պատմութեան

(*) Եղեսիա

վերաբերեալը նկարագրել նորա դաստուրուԹեան հետ. զոր. Եդիպտոսը՝ Իսրայէլացւոց այն տեղից դուրս գալու պատմուԹեան հետ. Քանանացւոց երկիրը նրկարագրել իբրև ներածուԹիւն Յեսու Նաւեայ գրքին. Վերջին Պաղեստինը՝ Նոր Կտակարանը սկսելուց յառաջ ևէն: Պաղեստինի այժմեան աւերակների մասին որպիսի և իցէ դէպքում յիշիր և վերջապէս ընդհանուր նկատողուԹիւն արա այդ կողմերի համար՝ Երուսաղէմի աւերումը պատմելու ժամանակը: Սրբազան պատմուԹիւնը ինքը առիԹ է տալիս այսպիսի դասակարգուԹեան, որովհետև նորա մէջ ևս վարդապետական յօդուածներին հետևում է պատմականը, ապա աշխարհագրականը ևէն: Վերջապէս այսպիսի նկատողուԹեանց մեծ և կարևոր մասը Թողնել պէտք է չորրորդ շրջանի համար, այս ինքն ուսումնարանական դասատուուԹեան վերջին երկու տարիների համար:

Դ. Չորրորդ շրջանի մէջ Աստուածաշնչից հաւաքածոյ փոքրիկ հատուածների փոխանակ առաջարկվում է ամբողջ Աստուածաշունչ գրքերի ընԹերցումը, եԹէ ոչ այնպէս, որ իւրաքանչիւր գիրքը անշուշտ լրիւ կարդացուի, գոնէ այնպէս՝ որ իւրաքանչիւր գրքից ստացուի նորա ամբողջուԹեան մասին գիտելիք: Այս պատճառաւ աւելորդ չեն այս տեղ և այս գրքերի ներածուԹիւնները առանց յաւելացնելու նոցա վերայ և զանազան ուսումնական ենԹադրուԹիւններ. բայց ամենակարևորն է այս տեղ սահմանել ընԹերցւած գրքերը, որոշել նոցա մէջ եղած գլխաւոր ճշմարտուԹիւնները երկրորդականներից, ցոյց տալ կապը և առհասարակ աշակերտին ծանօԹացնել գրքի ոգւոյն: Վերոյիշեալ կերպով իւրաքանչիւր գիրքը կարդալուց զինի պարտաւոր է աշակերտը ընԹեռնուլ և միւս ի բաց Թողուածները խորհրդածուԹեամբ և խրատատուուԹեամբ: Ըստ այսմ երրորդ շրջանի համար մեր յառաջադրած ամեն կանոնները պէտք է կատարուին և չորրորդ շրջանում, և այն՝ խիստ ճշդուԹեամբ. բարձրագոյն պարզուԹեան և կարգաւորուԹեան հետ միասին դաստատուուԹիւնը պէտք է լինի և այնպէս բազմակողմանի, որպէս զի ապագայում կարողանայ աշակերտը իւր կեանքի ամեն անցքերը վարել Աստուածաշնչի ճշմարտուԹեանց համեմատ և դիմել դէպ ի բարձրագոյն նպատակը. ի հարկէ այս տեղ ամենևին անպատշաճ է արագավազ ընԹերցանուԹիւնը և ցամաք ու սառն մեկնուԹիւնը: Թող ինքը ուսուցիչը ոգևորուի Աստուածաշնչի ոգւով, զդայ իւր սրբազան կոչումը վերածելու երեխաներին դէպ ի մի նոր աստիճան բարոյականուԹեան և առաջնորդելու նրանց դէպ ի երկնից ԱրքայուԹիւն:

Բայ ի պատմական գրքերից, որոնցից բոլոր Նոր Կտակարանքը և մեծ մասը Հին Կտակարանի հարկաւոր են ուսումնարանում կարդալու համար, մանաւանդ յարմար են Ապօստոլները, Ապօստոլի առաքելքը, Յեսուայ, Սէրտը, իսկ Նոր Կտակարանից Տէրոջ և Յակոբոս Նկղնեքը. սակայն այս տեղ մեծ նշանակուԹիւն ունի նոյնպէս ուսուցչի առանձին սէրը դէպ ի մի նոր որ և իցէ գիրք, նա կգրաւէ նրանով իւր աշակերտներին ևս:

ԵԹէ անբաւական կլինի ժամանակը վերոյիշեալ կանոններով կարդալուն ամբողջ

զրքերը, պէտք է դարձեալ շարունակել հարկաւոր հատուածների ընտրութիւնը, ինչպէս եղել էր երրորդ շրջանում, միայն խիստ պահանջողութեամբ: Այս տեղ կարելի է առարկաները բաժանել ըստ եկեղեցական տարւոյ *), կամ ըստ տնտիպ. թէև այս կարգը բոլորովին արտաքին է, և հետևաբար հեշտ կարող է եկեղեցական կարգ անուանելու յարմարութիւն ստանալ. ինքնակայ կարգը, որի նպատակն է կրօնական կարգաւորապէս զարգացումը, ամենայն դէպքերում համապատասխան է մանկավարժութեան. ինչ ինչ մասեր կարելի է թողնել երիտասարդի ինքնակրթութեանը, ուսումնարանից դուրս գալուց յետոյ. այնու ամենայնիւ շատ էլ չէ կարելի հաւատալ նրանց. փորձը ցոյց է տալիս, որ ուսումնարանի մէջ աշակերտի սովորածները շատ անգամ ապագայում մոռացվում են քան թէ կատարելագործվում . . . : Ուսումնարանից շուտով արձակվելու և զարգացած մարդ համարվելու միտքը աշակերտների վրայ աւելի հզօր կերպով է ներգործում քան թէ հոգևոր ՝ օր խրատները: Նթէ եկեղեցին և ուսումնարանը միացեալ զօրութիւնով չընդդիմադրեն աշխարհի աւերիչ ազդեցութեանը, այն ժամանակ մեր երիտասարդները չեն ունենալ դէպ ի կրօնը անձնազոհութիւն, և կրաւականանան կրօնի պահանջմանցը արտաքին կերպով միմիայն յարմարուելովը: Այժմ մեր մէջ ևս անցել է ուսումնարանից գալուց յետոյ եկեղեցական հրահանգաց արհամարհութիւնը իրրև մի հնացեալ բան, որը հարկաւոր է նորոգել այժմեայն ժամանակի մանկավարժական յառաջադիմութեան համապատասխանող փոխակերպութիւն տալով նորա դասատուութեանը, հեռի հին մեքենայական ձևերից: Աստուածաշնչի ընթերցմունքը, հոգևոր երգերի և խրատական հատուածների ստէպ գործածութիւնը, եկեղեցւոյ թէ հին և թէ նոր պատմութիւնները, միայն առանց վիճաբանութեան, աւելի օգտաւէտ են, քան թէ քրիստոնէական վարդապետութեան մշտնջենաւոր սառն կրկնողութիւնը: Մեր երիտասարդները լաւ պէտք է իմանան Աստուածաշունչը և կրօնը, ապա թէ ոչ մեր եկեղեցւոյ այժմեան շարժմունքը բարի վախճան չէ կարող ունենալ:

Թարգմանեաց

Սարգիս Պաղտասար Մ. Պաղտասարեան

ՄԻ ԲԱՆԻ ՅՕՍՓ

ԻՄ ԱՐԵՂԱՑՈՒԹԵԱՆ ԱՈՒԹՈՎ.

«Ընարատի», փետրուարի ամսաթերթում տպած էր յայտարարութիւն չորս նորընծայ Արեղաների ձեռնադրութեան մասին. այդ չորսի մէջ էի և ես: Ւարտեալով այժմ քառամեայ պատրաստութիւնը և արժանանալով մատուցանել առաջին սուրբ Պատարագը, կամենում քանի մի խօսք ուղղել դէպ ի մեր ազգակիցը:

Արդ՝ նախ քան թէ կդործէ մի այնպիսի քայլ, որը ծանրակշիռ հետևանք-

---

(*) Երևի հեղինակը «եկեղեցւոյ տարի» անուանել է եկեղեցւոյ «աւուր պատշաճի» անուանեալ ընթերցուածոց և տնտից միանուագ շրջանը: Ծ. Թրք.

ներ պիտի ունենայ նորա ամպագայ կեանքի համար՝ երկար մտածումէ, խորհումէ, քննումէ և կշռադատումէ այդ քայլը։ Նա մտածումէ ոչ թէ միայն իւր բախտաւորութեան վերայ, այլ և նորա վերայ թէ ո՛ր տեսակ գործի համար աւելի պատրաստուած է ինքն և ընդունակ, և ո՛րչափ գոհացուցիչ կերպով կարող է կատարել այն գործը։ Այս մտածմունքները և խորհրդածութիւնները հարկաւոր են ամենայն գործի և ամենայն քայլի համար, նա մանաւանդ հարկաւոր են նոքա այնպիսի մարդոց համար, որոնք որոշումեն լինել հոգևորական։ Երբ մի կողմից՝ ամենայնուստեք լսումեն ծանրագոյն տրտունջներ մեր եկեղեցականների դէմ թէ՝ տգէտ են նոքա, անբարոյական, ընչասէր և ոչ աստուածասէր և ազգասէր, և՛ն. և երբ միւս կողմից՝ մեր եկեղեցականները չեն վայելում արժանաւոր սէր և պատիւ ազգայնոց կողմից, այլ իբրև մեծի մասին արհամարհանք և մինչեւ անգամ ատելութիւն, որպիսի մտածմունքներ կարող են թելադրել մարդուն այնու ամենայնիւ դառնալ հոգևորական։ Մեր կարծիքով՝ զլխաւորապէս հետևեալ մտածմունքները։

1) Որանք դառնումեն հոգևորական յատկապէս հոգու փրկութեան համար։ Այս շարժառիթը մեծ գործադրութիւն ունենումէ մանաւանդ մի ազգի քրիստոնէութեան առաջին դարերում, երբ նոր հաւատքնոր և գերբնական կրակով վառումէ անթիւ և անհամար սրտեր։ Այս իսկ ժամանակամիջոցին են պատկանում նահատակները, մարտիրոսները, կրօնական պատերազմները, ճգնաւորները, անապատականները, խարազնազգեացները, խոտաճարակները, վանքեր, անապատներ, մենաստանները, եկեղեցիներ։ Մեր ազգը նոյնպէս ունեցաւ այսպիսի ժամանակամիջոց, որն՝ ի պատիւ Հայաստանի՝ բաւականին երկարատև էր, դարևոր էր։

Այլ այս վառվռուն ջերմեռանդութիւնը սկսումէ հետզհետէ պաղել և նուազանալ։ Այս երևոյթը կարող է առաջ գալ զանազան պատճառներից. զլխաւորապէս ժողովրդի աշխարհասիրութիւնից, այլ և մասնաւորապէս կրօնական աղատամտութիւնից, եկեղեցական խռովութիւններից, հոգևորականների անբարոյականութիւնից և տգիտութիւնից, պատմաբանական դառն և դաժան հանգամանքներից ևլն։ Այսպիսի միջոցում սկսումէ սակաւ առ սակաւ փոքրանալ այնպիսիների թիւը, որոնք փափագով դիմումեն լինել սուրբ եկեղեցւոյ սպասաւոր յատկապէս հոգու փրկութեան համար։

Տարաբախտաբար, մեր ազգի մէջ նոյնպէս բաւականին շէջած է այժմ այս տեսակ ջերմեռանդութիւնը։ Այլ այս երևոյթը մեր ազգի մէջ հետևանք է ոչ թէ կրօնական աղատամտութեան, որովհետև մենք երբէք չենք ունեցած այնպիսի աղատամիտներ, որոնք քարոզած լինէին արհամարհանք և սառնութիւն դէպ ի եկեղեցին և դէպ ի կրօնական զգացմունքները, և ոչ եկեղեցական խռովութիւնների, որովհետև՝ ինչպէս երևումէ մեր եկեղեցական պատմութիւնից՝ Հայաստանեայց խաղաղասէր և երկայնամիտ Եկեղեցու մէջ երբէք չեն եղած ծանր խռովութիւններ, հերձուածներ և մոլորութիւններ. այլ հետևանք է հետզհետէ զլխաւորապէս դարու

աշխարհասէր ոգու, և մանաւորապէս եկեղեցականների տգիտութեան և անբարոյականութեան, այլ և պատմաբանական հանգամանքների։ Մի կողմից՝ ժամանակիս աշխարհասէր ոգին արդէն բաւականին ներգործել է և ՝այերի վերայ, և կեանքի փափկութիւնները, վայելչութիւնները, թատրոնները, պարահանդէսները, սիրահարական վերաբանութիւնները՝ աւելի են գրաւում շատերի սիրտը, քան թէ եկեղեցու սրբազան սպասաւորութիւնը։ Միւս կողմից՝ վերջին հինգ վեց դարու ընթացքում կորուսած լինելով քաղաքական ազատութիւնը և ինքնիշխանութիւնը, կրելով միշտ դառն և չարաչար հարուածներ իշխող ազգերից, միշտ հալածուած լինելով եկեղեցու և հաւատի համար, միշտ վտարանդի լինելով աշխարհից աշխարհ, ղըրուած և ընկղմած լինելով յետին աղքատութեան և տգիտութեան մէջ, և անսահման համբերութիւնից յետոյ տեսնելով որ Աստուած ևս դարձրել է իւր երեսը և աւելի չէ կամենում ողորմիլ և օգնել, այնպէս խոպանացաւ և կոշտացաւ ՝այ մարդու սիրտը, որ համարեա բոլորովին ցամաքեցաւ նախկին ջերմեռանդութիւնը, կորան և անհետացան կրօնական փափուկ զգացմունքները։ Այսպիսի պատճառների ներգործութեամբ այժմ շատ նուազ է յատկապէս հոգու փրկութեան համար հոգևորական դառնողների թիւը. չունինք այժմ ճգնաւորներ, անապատականներ, միանձունքներ. ամայի և աւերակ են մեր վանքերը և մենաստանները։

2) Ոմանք դառնում են հոգևորական փառասէր և պատուախնդիր լինելուն պատճառով։ ՝Ին ժամանակներում, երբ եկեղեցին մեծ ազդեցութիւն ուներ քաղաքական կեանքի բոլոր երևոյթների վերայ, երբ ժողովրդի կեանքը առաւելապէս կրօնական ուղղութիւն ուներ, և երբ եկեղեցականները, մանաւանդ բարձր աստիճաններ ունեցողները, զոր օրինակ եպիսկոպոսները, արքեպիսկոպոսները, վիճակաւոր առաջնորդները, մետրապօլիտները, պատրիարգները, պապերը և կաթողիկոսները վայելում էին ժողովրդի կողմից և միևնոյն անգամ մարմնաւոր գերագոյն իշխանութեան կողմից յոյժ մեծ յարգանք և պատիւ, ինքնիշխանաբար կառավարում էին ամբողջ վիճակներ և ազգեր, շատ մարդիկ, մանաւանդ հարուստ մեծատունք և իշխանազունք, չբաւականանալով իւրեանց աշխարհական փարթամութիւնով, յօժարութեամբ դառնում էին եկեղեցական, ըղձխաւորապէս վանական, և շինելով սեփական վանքեր, կամ օգնական ունենալով հարստութիւն, բարձրագոյն ծագումն, իշխանազն և թագաւորազն ազգականներ, շատ հեշտ կարողանում էին հասնել իւրեանց փառասէր նպատակին - դառնում էին եպիսկոպոսներ, պատրիարգներ, և լն։ Այս տեսակ եկեղեցականների թիւը՝ համեմատաբար ուրիշ տեսակ եկեղեցականների թուի հետ՝ բաւականին աննշան էր ամենայն ժամանակ և ամենայն տեղ։ Մեր ազգի մէջ ևս եղան մի քանի այսպիսի օրինակներ։

3) Ոմանք դառնում են եկեղեցական իւրեանց առօրեայ կեանքը ապահովացնելու համար և դիւրին ճանապարհով ապրուստ ձեռք բերելու համար։ Այս դասակարգին վերաբերում են ըստ մեծի մա-

սին քահանաները։ Որովհետև եկեղեցական դասը միշտ, մինչև անգամ դառն ժամանակներում, վայելել է մի քանի արտոնութիւններ թէ իւր սեփական և թէ օտարազգի, մինչև անգամ մահմեդական մարմնաւոր բարձրագոյն իշխանութիւնից, և ապահովացրած է եղել ապրուստի մասին բարեպաշտ և աստուածասէր մարդոց ջերմեռանդութիւնից բղխած յօժարակամ նուիրատուութիւններով, միշտ մեծ է եղել քահանայ լինել ցանկացողների թիւը, ոչ միայն գիւղերում, այլ և քաղաքներում։ Մեր ազգի մէջ այս ցանկութիւնը աւելի մեծ տեղիք կարող էր ունենալ հին ժամանակներում, երբ քահանայական կոչումն շատ տող ժառանգաբար անցնումէր հօրից որդուն և երբ այդ քահանայական ցեղը տերումէր եկեղեցապատկան կալուածներին իբրև իւր սեփականութեան։ Այս դասակարգին կարող է վերաբերուիլ և աննշան թիւը վանականների, որոնք կամ անընդունակ լինելով և կամ ծոյլ՝ քրանքով ուտել հացը, կամ ընկղմած լինելով յետին աղքատութեան մէջ և իմանալով որ վանքերում վանականները վարումեն բաւականին ապահովացրած և հանգիստ կեանք, ցանկանումեն դառնալ և դառնումեն վարդապետ։ Այսպիսի մարդիկ առաջ են գալի գլխաւորապէս վանքերի շրջակայ և մերձաւոր գիւղերում։ Մեր այժմեան վանականների բաւականին նշանաւոր մասն պատկանումէ սոյն այս դասակարգին։

4) Ոմանք դառնումեն եկեղեցական՝ ազդասիրական դրդմամբ և նպատակով։ Տեսնելով որ առհասարակ եկեղեցականները և մանաւանդ վանականները, այ է վարդապետները, եպիսկոպոսները և այլն. մեծ ներգործութիւն կարող են ունենալ ժողովրդի բարոյական, մտաւորական, և մինչև անգամ նիւթաւոր զարգացման վրայ, մանաւանդ երբ ժողովուրդը աւելի կրօնական ուղղութիւն ունի, շատերը ցանկանումեն դառնալ և դառնումեն եկեղեցական և առաւելապէս վանական, որպէս զի ունենան իւրեանց առաջև աւելի լայն և ընդարձակ ասպարէզ գործակատարութեան և աւելի հնարաւոր և հզօր միջոցներ տեսնել հարկաւոր պատրաստութիւններ ազգաշինութեան համար։ Այսպիսի եկեղեցականներ առաջ են գալի մանաւանդ այն ժամանակ, երբ ազգը կամ գտանուում է ժամանակաւոր վտանգի մէջ, կամ երբ՝ զուրկ լինելով աղատութիւնից, ինքնիշխան կառավարութիւնից, հայրենիքից, միայն եկեղեցին է մնում մխիթարութիւն անցեալի համար, յոյս ապագայի համար և ներկայումը ամուր շաղկապ և օղակ անցեալի և ապագայի մէջ։ Մեր եկեղեցական պատմութիւնը ունի այս կողմից հոյակապ օրինակներ։ Զգիշելով այն՝ որ ոչ մի ազգային դործ չէ մնացել առանց մասնակցութեան եկեղեցականների, որոնք խաչ և աւետարան ձեռքին իբրեւ քաջ ախոյեաններ և Քրիստոսի զինուորներ միշտ պաշտպանել են սուրբ եկեղեցին և հայրենիքը, չգիշելով այն՝ որ ոչ մի երևելի պատմաբանական անգ.ք չէ կատարուել առանց մասնակցութեան կաթողիկոսների, եպիսկոպոսների, վարդապետների, մինչև անգամ քահանաների, չիշենք միայն սուրբ Յարդմանչաց օրինակը։ Իբրև ուսումնական մարդիկ՝ նոքա ի հարկէ մեծամեծ գործեր կարող էին

կատարել և աշխարհական միտքով, բայց նոցա ազգասիրական ոգին փափագումը առաւել ընդարձակ ասպարէզ, ուստի անձնուիրաբար զոհելով աշխարհական կեանքի փափկութիւնները դարձան հոգևորականներ: Նա արդարև՝ այժմ շատ դժուարին է որոշել՝ թէ սուրբ Ծարգմանիչները եթէ միայն աշխարհական, կարող էին արդեօք այնպէս պայծառացնել իւրեանց ազգը, եկեղեցին և հայրենիքը, որչափ պայծառացրին լինելով եկեղեցական:

Ամենայն ազգ իւր համակրութիւնը միշտ ցոյց է տուել առաւելապէս եկեղեցական դասին, առաւելապէն յուսով ընպասել է և մեծագոյն պատրաստութեամբ ու յօժարութեամբ ընդունել է նորանից իւր բարոյական և մտաւոր կրթութիւնը: Ո՞անուանդ մի ազգ, որը կորուսել է իւր ամբողջութիւնը, որը ենթադրուել է բազմատեսակ ձնշողական ազդեցութիւններին, ոչ այլապէս կարող է պահպանել իւր ինքնուրոյնութիւնը և ազգութիւնը, եթէ ոչ հոգևորականների ձեռքով և նոցա գործունէութեամբ: Այժմ մենք Հայերս, ցրուած լինելով բոլոր աշխարհքի երեսի վերայ, չունինք ոչ ամբողջութիւն, ոչ հայրենիք, ոչ դիտութիւն, ոչ հարբսութիւն, ոչ ինքնակառավարութիւն. զուրկ ենք բոլորից, կորցրել ենք այս բոլորը, և մնացել են միայն Եկեղեցին և լեզուն: Եկեղեցին պէտք է մխիթարէ մեզ այսպիսի տխուր և ողբալի ժամանակ, եկեղեցին է մեր յոյսը, մեր փրկութեան ղեկը: Նա ի՞նչ սրանից աւելի հաստատ ղեկ, աւելի՝ ամուր նեցուկ. ինքն Ամենակարող և Ողորմած Աստուածն է պահապան և պաշտպան իւր սուրբ Եկեղեցւոյ: Միայն եկեղեցին կարող է պահպանել Հայութիւնը, ինչպէս պահպանել է մինչև այսօր. միայն եկեղեցին կարող է նորոգել ազգութիւնը, տալ մեզ դիտութիւն, հարստութիւն, երջանկութիւն, փառք. իսկ լեզուն պէտք է լինի հաստատ գործիք ծանր և դժուար գործակատարութեան: Այլ ի՞նչպէս կարող է եկեղեցին կատարել այս ծանր պարտաւորութիւնը, հասնել այս բարձր նպատակին, եթէ չունենայ արժանաւոր գործակատարներ, ուսումնական, առաքինի, ջերմեռանդ, հաւատարիմ, աստուածասէր և ազգասէր պաշտօնեաներ՝ քահանաներ, վարդապետներ և եպիսկոպոսներ:

Ահա այսպիսի մտքեր շրջումէին իմ մէջ, երբ ես 1868 թուականին աւարտեցի ուսումս Մոսկուայի Կայսերական Համալսարանում *): Դեռ Համալսարանում որոշել էի ինձ համար նպատակ ծառայել ազգին, ձգել ազգաշինութեան գանձանակի մէջ իմ հաւեստ և անշան լուման, և ազգի յառաջադիմութեան մէջ որոնել իմ անձնական օգուտը և երջանկութիւնը: Ըրքան շատ էի մտածում թէ որ ճանապարհով աւելի շուտով կարող եմ հասնել իմ հաւեստ և փափագելի նպատակին, այնքան աւելի և աւելի համոզուում էի՝ որ հարկաւոր է դառնալ եկեղեցական: Այլ

(*) Հայր Վահան Բաստամեանը ստացած էր իւր ուսումն Մոսկուայում, նախ Լազարեան Ճեմարանում և ապա Կայսերական Համալսարանի բրաւոպիտական բաժնում և ստացել է իրաւաբանութեան Կանդիդատի ուսումնական աստիճանը:

Խմբ.

նախապէս կամենում էի հաստատում պատշաճաւոր պատրաստութիւն տեսնել բարձր և սրբազան կոչումն ստանալու համար։ Մի և նոյն ժամանակ՝ չկամենալով հեռանալ իմ ուսումնական ընթացքից, ես որոշեցի ուսանել եկեղեցական իրաւագիտութիւն, որ զուտ իրաւաբանական գիտութիւն է և որոշում եկեղեցու յարաբերութիւնը՝ դէպի թագաւորութիւնը, հասարակութիւնը, ընտանիքը և առանձին անհատը, և բացատրում եկեղեցու ներգործութիւնը և ազդեցութիւնը տէրութեան օրէնսդրութեան վերայ և ժողովրդի իրաւագիտական զարգացման վերայ։ Ես տեղ աչքի առաջև ունէի երկու տեսակ օգուտ. մին՝ ծանօթանալ ընդարձակ կերպով ազգային եկեղեցական պատմութեան հետ, երկրորդ՝ ուսանել թէ հրպիսի ուղղութիւն և զարգացումն ունեցաւ մեր ազգային կեանքի իրաւագիտական կողմն և հրպիսի ազդեցութիւն ունեցաւ այդ զարգացման վերայ և տէրութեան օրէնսդրութեան վերայ մեր եկեղեցին։

Այդ ինչպէս կարելի էր իրագործել մի այսպիսի ձեռնարկութիւն, եթէ ոչ՝ ապահովացած լինելով պատշաճաւոր կերպով ապրուստի կողմից՝ պարապել երկարատև ընթերցանութեամբ ազգային հին մատենագրութեան, իսկ սորա համար հրտեղ աւելի հարուստ աղբիւր՝ եթէ ոչ սուրբ Էջմիածնի հռչակաւոր մատենադարանում։ Ես յապէս ուրեմն այս իմ երկրորդ նպատակը ուղղակի տանում էր ինձ դէպի իմ առաջին նպատակը, տալիս էր միջոց աւելի մօտիկ ծանօթանալ մեր ազգի և եկեղեցու դրութեան և շրջապատող հանգամանքների հետ։

Բարեբախտաբար, հարկը չստիպեց ինձ երկար դեգերել այս մտածմունքներիս մէջ, որովհետև անակնկալ կերպով քաջալերութիւն և խրախոյս ստացայ մի անկեղծ աղբատիրից։ Մեծապատիւ Մկրտիչ Սանասարեանն, որի ազգասիրական գործերը արդէն հռչակել են իւր անունը բոլոր ազգի մէջ, իմանալով իմ դիտաւորութիւնները՝ ամենայն պատրաստութեամբ յանձնառու եղաւ փութալ իմ բոլոր ծախսերը երկու երեք տարու ընթացքում, և ես իսկոյն դիմեցի դէպի ընդհանուր ազգի բազմերախտ Մայրը — Ուսանկար սուրբ Էջմիածինը։ Այս տեղ երեք տարու ընթացքում մի կողմից՝ ես պարապումի մատենադարանում և պատրաստեցի մի ընդարձակ շարադրութիւն, որի մէջ քննում եմ ազգային իրաւագիտական զարգացումն և եկեղեցու ներգործութիւնը այդ զարգացման վերայ և տէրութենական օրէնսդրութեան վերայ, և ապա քննում եմ քրէական, քաղաքական և եկեղեցական օրէնսդրութիւնը ըստ Պատասխանադրքի Մխիթար Գօշի։ Մեւս կողմից ես ուսանում էի վանական կեանքը և ազգային կեանքի հանգամանքները. այս տեղ ես նկատեցի որ մեր ազգային գործերը գտանւում են գլխաւորապէս հոգևոր իշխանութեան ձեռքում, նկատեցի որ մեր եկեղեցականները չունին պատշաճաւոր պատրաստութիւն իւրեանց վերայ եղած թէ հոգևոր և թէ քաղաքական պարտքերը օրինաւոր կերպով լցուցանելու համար, և տեսայ որ Նորին Վեհափառութիւն Գէորգ Գ. Կաթողիկոսն ամենայն հայոց ամենայն ջանքով աշխատում է առհասարակ բարւոքել ընդհանուր ազգի վի-

ձակը և թէ մասնաւորապէս ձեռք բերել ընտիր և արժանաւոր եկեղեցականներ և պատրաստել ազգի համար ուսումնական և առաքինի հովիւներ, որոյ վասն և կառուցանումք հոյակապ ուսումնարան։ Հովսափետի այսպիսի ազգաշէն դիտաւորութիւններըառաւել ևս խրախուսեցին և վըստահութիւն տուին ինձ գործել այն քայլը, որի վերայ մտածումի չորս հինգ տարի։ Այրջապէս, ես համարձակուեցայ յայտնել Նորին Ա. Եհափառութեան իմ սրտի փափագը և ջերմեռանդ ցանկութիւնը լինել սպասաւոր սուրբ եկեղեցւոյ. Որըպէսզի Հայրապետը հայրական սիրով ընդունէց իմ խնդիրը և բարեհաճեցաւ ուրթօրեայ միջոցում շնորհել ինձ Արխասարկաւագութեան, Արկաւագութեան և Ընթերցութեան սրբազան աստիճանները *)։

Եթէ Կաթոլիկ եկեղեցին ունի իւր հոչակաւոր Հռովմը, եթէ Յունաց եկեղեցին ունի իւր բազմահամբաւ Կիւզանդիոնը, Հայաստանեայց Եկեղեցին նոյնպէս ունի իւր փառազարդ Էջմիածինը։ Ընդ այսմ ծագեցաւ Հայոց ազգի հոգևոր լուսաւորութեան առաջին ճառագայթը, այստեղ բղխեց նորա մտաւոր զարգացման և լուսաւորութեան աղբիւրը, այստեղ ցոլաց Հայաստանեայց Եկեղեցւոյ անխախտ և անսասան հաստատութեան ոյժը, այստեղ ստացաւ ազգային քաղաքական կեանքը նոր ուղղութիւն, նոր ընթացք։ Այս եղաւ բազմաթիւ դարերու ընթացքում ազգային կեանքի կենդրոն, տիեղերացիր ազգի անխզելի շաղկապ, միութեան ամուր օղակ։ Ընդ այսու հետև այս տեղից պէտք է ծագէ ազգային լուսաւորութեան նոր արշալոյսը, այստեղից պէտք է հալածուի և ցրուի այժմեան տգիտութեան աղջամուղջը, այստեղից պէտք է ըստանայ ազգը նոր կեանք, նոր ընթացք, բարոյական ոյժ և հաստատ միութիւն։ Այդ սորա համար հարկաւոր է որ՝ ինչպէս սուրբ Յակոբ Պարթևի և սուրբ Մեսրոպի օրօքը ազգասիրութեան եռանդով և կրակով լի աշխոյժ և ուշիմ երիտասարդները դիմեցին դէպի Աթէնք, Ղեքսանդրիա, Հռովմ և Կիւզանդիա և հարստանալով այնտեղ բարձրագոյն գիտութիւններով վերադարձան իւրեանց սիրելի և անձկալի հայրենիքը և ծագեցին նոր արշալոյս ազգի մտաւոր զարգացման համար, այնպէս և այժմ Եւրոպայի համալսարաններում և բարձրագոյն ուսումնարաններում ուսմունքը աւարտած երիտասարդները պէտք է դիմեն դէպի սուրբ Էջմիածինը, որպէս զի կարողանայ սա կատարել իւր բարոյական և սրբազան պարտաւորութիւնները։ Ընդ այնուամենայնիւ երիտասարդների համար, անկեղծ ու ձշմարիտ ազգասէրների համար ի՞նչ աւելի սուրբ ցանկութիւն, ի՞նչ աւելի բարձր երջանկութիւն, եթէ ոչ բարեկեցութիւն և յառաջադիմութիւն իւր ազգի, բարոյականապէս և մտաւորապէս թշուառ և ողորմելի դրութեան մէջ ընկղմած ազգի. և ի՞նչ աւելի վսեմ նպատակ, աւելի նուիրական ձգտողութիւն, եթէ ոչ ջան ի գործ դնել առ ի յառաջ խաղացուցանել այդ ազգը

(*) Հայր Վահան Բաստամեանը բաւականին երկար ժամանակ մնալով Էջմիածնում իբրև աշխարհական, արդէն յայտնի էր Նորին Ա. Եհափառութեան թէ իւր ուսումնասիրութեամբ և թէ այլ ընտիր յատկութիւններով։ Ս. Խ.

անձնազոհութեամբ ծառայել նորան և յորդորել նորա բազմատեսակ կարօտութիւնները։ Եթէ հինգերորդ դարու հոգևորականները կարող էին մի խաւարամած և յոյժ տգէտ ազգ, ազգ՝ որը դեռ չունէր մինչև անգամ իւր կանոնաւոր այբբենը, խլել հանել այնպիսի դրութիւնից և հասցնել լուսաւորութեան բաւականին բարձր կէտին, կարող էին հաստատել ընտիր դպրոցներ և ծաւալել գիտութիւններ, կարող էին յօրինել և նուիրել ազգային դեռաբոյս մատենագրութեան «Ոսկի դար», կարող էին ազգը հասցնել երջանիկ կեանքին, տասնևիններորդ դարու հոգևորականները կարող են կատարել նոյնը, կարող են կատարել կրկնապատիկը, եթէ նոցա պէս հարուստ լինին գիտութիւններով և վառած լինին ազգասիրական կրակով, այս աստուածային կրակով։ Ընդարձ, նոցա ժամանակ կային և շատ բարեյաջող հանգամանքներ՝ միութիւն ազգի, քաղաքական ոյժ, ուսումնասէր և խրախուսիչ հայրապետ. բայց և այժմ կան, թէև այլ տեսակ, բարեպատեհ միջոցներ, այժմ կան ընդհանուր մարդկութեան քաղաքակրթութեամբ և լուսաւորութեամբ պատրաստած առաւել ուղիղ ճանապարհներ և դիւրին միջոցներ, մանաւանդ և այժմ ունինք ազգասէր և ուսումնասէր Հայրապետ։ Ինչպէս այն ժամանակ Ժողովուեցան սուրբ Սահակի և սուրբ Մեսրոպի չորս կողմը աշխոյժ, ազնիւ, ուսումնավատագ և ազգասէր երիտասարդներ, թող և այժմ ժողովուին Վեհափառ Գէորգի չորս կողմը նոյնպիսի երիտասարդներ. ինչպէս այն ժամանակ՝ նախ ցրուելով բոլոր լուսաւորեալ քաղաքների մէջ և ամենայն տեղ հաւաքելով մեղուների պէս բարձր և պատուական գիտութիւններ և յետոյ դումարուելով և կենդրոնանալով Վաղարշապատ մայրաքաղաքի մէջ՝ սկսեցին բղխել և տարածել ամենայն ուրեք իւրեանց գիտութիւնները հիմնելով ազգային դպրոցներ, թարգմանելով և շարադրելով ընտիր մատեաններ, քարոզելով եկեղեցիների և վանքերի մէջ, թող և այժմ կատարուի այս բոլորը, և անշուշտ ամենակարճ միջոցում վերստին կնորոգուի մեր կեանքը և կպայծառանայ Հայաստանեայց սուրբ Եկեղեցին։ Վեհափառ Հայրապետը բացել է արդէն իւր դուռը և պատրաստ է սիրով ընդունել Հայ երիտասարդներից բարեմիտ մարդիկ, անկեղծ ազգասէրներ, հաւատարիմ և քրանաչան մշակներ, միասին խորհել և գործել ազգի յառաջադիմութեան և Եկեղեցւոյ պայծառութեան համար։

Վահան Եփեղայ Խոսրովեանց։

28 Ապրիլ, 1872 թ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՑՐԵՆԵԱՑ.

(Շարունակութիւն)

Ա. Կաֆֆանք.

Տաճարի արևելակողմն քարափի մէջ բաւական խորութեամբ փորուած ջրոյ աւազան մի կայ, ուր տեղ հոսել է յառաջ աղբիւր ցուրտ ջրոյ «Ա. Կաթմանք», անունով. և ինչպէս կպատմեն, ամեն կիւրակնամուտ երեկոները մոմ կը վառէին

այս տեղ, աւանդութիւն բնակչաց Ապրակունեաց կասէ թէ՝ այնքան յորդ ջուր կվազէր այս սուրբ Կաթանքէն, որ մինչև անգամ Պարսիկ աւազակ խումբերէն շըրջակայ Հայ գիւղերէից բնակչաց այս մեհնատանի մէջ ամրացած ժամանակը՝ բազմութիւն ներքաստանաց պիտոյից բաւականութիւն կտար, և ցամաքեցաւ կասեն վատաբարոյ մարդոյ մի մեղաց պատճառաւ, որ գարշ գոլ ծով անարգած էր սորա յարդը Վարդավառի խառնիճաղանձ բազմութեան ժամանակը:

Երնջակու Ս. Կարապետի այս մենաստանը առհասարակ տեղական Հայ և Մահմետական բնակչաց մէջ հռչակուած է իբրև բուժիչ խայթուածոց օձից. երբ որ մկը հարաւ օձէն, պէտք է գիտել որ իսկոյն կբերուի այս տաճարի դուռն. ուր օրհնութեան ասացեալ հողէն (որոյ համար յիշած եմք) քիչ մի օձահարի բերանը ձգել տալով, և քիչ մի ջրով շաղուած խայթուածի վերան կապելով կմիամտուին բոլորովին: Այս դէպքը քանիցս անգամ կրկնուած է իմ օրովս և տեսած եմ որ ինչպէս Հայ, նոյնպէս և Մահմետական օձահարները այնուհետև որչափ ուրախութիւն կզգան իւրեանց մէջ: Այսպիսի փորձերով կարելի է կշռադատել թէ՝ ներքին անդորրութիւնն սրտի որչափ ներգործութիւն կարող է ունենալ մարմնոյ վերայ:

Մասն Վանից.

Ը. Ապաթափրկիչ ասացեալ Ս. Նշան, արծաթեայ մեծադիր ոսկեզօծ քառաթև պահարանի մէջ. այս Ս. Նշանն ոմանք կը համարեն լինել մանն կոնքին, որի մէջ Վրիստոս իւր աշակերտաց ոտները լուաց. իսկ ոմանք մանն թաշկինակի Տեառն. տեղւոյս առաջնորդ Մատթէոս Եպիսկոպոսի, ներկայ միջոցս յիսուն տարւոյ չափ յառաջ առ ժողովուրդն ուղղած օրհնութեան թղթին մէջ վերջինն կձանաչուի, այսպէս սկսելով, ,, Ի դրանէ Երնջակու Ս. Կարապետի շնորհալի տաճարէն, և Ս. Թաշկինակէն Վրիստոսի . . . . . ,, Եւն. իսկ Մանուէլ Վ. Նիւմիւշխանցի կհամարէ լինել առաջինն: ,, Հաղարափրկիչ,, կոչեւելոյ պատճառն կմեկնէ աւանդութիւն բնակչաց երկրիս, և կհաստատէ նոյնն լինել որ ինչ ,, Մարդաղաւնեաց ,, սուրբ նշան կոչուելուն, հին յիշատակարաններուն մէջ: Յահկեցւոյ ,, Յանկալէ դրախտի ,, 672 երեսին՝ այս սուրբ նշանի համար կպատմուի թէ՝ երբ որ Լանկթամուր կգերէ Աիւնեաց երկիրը, մի ի գերեալոցն Եպիսկոպոս Յովհաննէս անուն այս սուրբ նշանն յուսն կապած կձգէ գինքն ի գետն և ,, շնորհօքն սուրբ նշանին զբնայր ի վերայ ջրոյն՝ որպէս ի ցամաքի,,. գերեվար զօրքը տեսնելով կզարհուրին և կյայտնեն Լանկ-թամուրին, որ երդմամբք կհաւատացնէ չվնասել, միայն թէ գայ և պատմէ իրան թէ որ զօրութեամբ ջրոյ վերայ անվնաս կընթանայ. և եպիսկոպոսն մօտ գալով կյայտնէ թէ՝ այս Ս. նշանի զօրութեամբ որ ինձ հետ է. թագաւորն հրաշեց վերայ ղարմացած կասէ եպիսկոպոսին, ինչ որ կուզես՝ խնդրէ և տամ. և եպիսկոպոսն ցոյց տալով մօտակայ փոքրիկ մատուռն մի՝ կասէ, խնդրեմ որ որչափ գերիք պարտնակուին այս մատրան մէջ՝ ազատ լինին. որ և իսկոյն կկատարուի. բայց մտածները սուրբ նշանի զօրութեամբ ա-

զաւնոյ թէ առած լուսամուէն կթռչին կերթան, և այսպէսով կարճ միջոցի մէջ գերիքը կվերջանան, և մատուռն չէ լցուի. զօրքը ապշած ներս կմնանեն, և հասու լինելով հանգամանքին, իսկոյն ահաբեկ կը թողուն կմեկնին անտի. այսպէսով սուրբ նշանն երկու անուանն ևս կառնու- ‘‘Մարգաղաւնեաց,,՝ որ մարդկանց աղաւնւոյ թև պարգևելով կազատէ, և ‘‘Հազարափըրկիչ,, որ հազարաւորները կփրկէ. նոյն մատուռն՝ որոյ համար կպատմուի այս հրաշքը, և ուր սուրբ նշանն երկար ժամանակ մնացած է մինչև ցիսիսադրութիւնըն, կոչէ այժմ ‘‘Գիւղիւ վանք,,՝ և է Նախիջևան գաւառի Ռոմնոյ գիւղէն եօթն վերստ հեռի, այլ ամայի և լքեալ:

Հայր Միքայել Շամչեան առաքելեաց կարգը դասելով այս աւանդութիւնն, կը գրէ. ‘‘այլ այս առաքելք չունին պէտս քննութեան. և թէ կայցէ խաչ այնպիսի անուամբ, մի ոմն ի գլողաց յօրինեալ իցէ զայսպիսի անհեթեթ պատճառ, վասն յարմարելոյ ընշանակութիւն անուանակոչութեան նորին: Եւ դարձեալ, ‘‘Այն է զարմանալին, զի Ջահկեցին իբրև ստոյգ ինչ ի մէջ բերէ զայս. բայց թուի թէ ոչ ինքն, և ոչ միւս պատմողն հաւատան այնմ՝ զոր գրեն,, (տես Շամ. Պատ. Հատ. Գ. Ծանօթ. Ը. գրոց եր. 881—882):

Պատմական ապացուցութեամբ ստուգած չէ՝ թէ երբ, և ուստի բերուած է Ս. Նշանս, կամ երբ փոխադրուած այս մենաստանը. միայն Ջահկեցին կգրէ, որ Յակոբոսի առաքելոյ Հայաստան բերած խաչն է: Ց երջին ժամանակներս Կիւմիւշխանցի Մանուէլ վարդապետն, իւր Ներսիսեան վանուց ստորագրութեան մէջ կգրէ թէ՝ Յակոբոս առաքեալն Պոնտի մասերէն երեք խաչ շինելով իւր ձեռամբն բերած է Հայաստան. յորոց մինն այս Երընջակու Հազարափրկիչ Ս. Նշանըն, միւս՝ Աւանայ վանուցն, և երրորդն՝ Գրիգորիոպոլ քաղաքին Երիմու: Այս Հազարափրկիչ Ս. Նշանս ոչ միայն երկրի Հայ բնակչաց, այլ և օտարաց և նոյն իսկ Մահմետականաց ակնածելի և նուիրական է, և ես քանիցս տեսած եմ Մահմետականներ զոհիւք եկած յերկրպագութիւն, ամեն ժամանակ կան սորա ջերմեռանդ ուխտաւորները. և երբ ձախորդութիւն կամ մօտալուտ վտանգ կամ ցաւ պատահի ժողովրդեան և երկրի, ամենքն առհասարակ ջերմեռանդագին սրտիւ կդիմեն դէպ ի սա, և շրջեցնելով իւրեանց մէջ թափօրական հանդիսիւ՝ կհայցեն բարեխօսութիւնն յօգնութիւն: Ասց ի այս ժամանակներս, Նախիջևանի բարեպաշտ ժողովրդոյ վաղեմի սովորութիւնն է ամեն տարի կանաչ Կիւրակէին շքեղ հանդիսիքաղաքը տանել:

Ա. Ընջ Ս. կարապետին Յովհաննու արձ. ոսկեզօծ:

Գ. Ընջ Յովհաննու Ոսկեբերանի արձ. ոսկեզօծ:

Գ. խաչ արձ. մեծադիր մասամբ Ս. կարապետին. յիշատակ տուեալն վանից Ջուղայեցի Յակովբ կաթուղիկոսին թվ ՈՀՆ:

Ե. խաչ արձ. չէֆթիշէ, մասամբ պետրոսի առաքելոյն:

Զ. խաչ արձ. չէֆթիշէ. մասամբք Ս. կարապետին և պետրոսի Առաքելոյն:

Է. խաչ արձ. մասամբ կենաց փայտի:

Ը. Խաչ արծ. մասամբ Ա. Կարապետին։

Թ. Խաչ. արծ. չեփթիշիք երեք անչափ մասամբք։

Ժ. Տուիք երկու՝ մինն արծ. ոսկեզօծ, միւսն փայտեայ, պարունակին զմասունս սրբոց, այլ չէ յայտ թէ որոց։

Ձեռագիր մատեան ա՚անկս.

Ձիք տարակոյս որ այս մենաստանն պիտի հարուստ գրադարան ունեցած լինի, բայց դժբաղդաբար կորցրել է ամենը մեր Հայաստանի միւս վանօրէից նման, ի որ հարստահարութեանց և յափշտակութեանց և ի որ տգիտութեան խաւարի թանձրանալուն պատճառաւ, որով յարդ և արժէք չունենալով դիւրաւ կարող էին ոչնչանալ. այժմու ունեցածներն միայն քանի մի հատ ձեռագիր Աստուածաշունչ և Աւետարան են դիպուածով գրտնուած ինչպէս յիշած եմք, որոց մէջ նըշանաւորներն են.

Ե. Աւետարան փոքրագիր ամբողջ, պատկերազարդ, ընտիր գրչագիր գրեալ ի մագաղաթի ի Ա. Պօղոս ի Թուին Հայոց ՈՊԱ. Ես Հղեցա զպրէ Համդեցւոյ. ունի ի վերջն յիշատակարան գրողին և ստացողացն՝ Մարինոս կուսի ‘‘ Որ ետու (ասէ) զայս ոսկեզօծ սուրբ Աւետարանս յիշատակ հոդւոց մերոց և ամենայն արեանառու ազգատոհմին մերոյ՝ կենդանեաց և ննջեցելոց ի դուռն մեծի անապատին Սկեվանայ, որ յերկրին Գողթամայ . . . . . ի Թուականին Հայոց ՈՒՒԻԸ,, , և Մկըրտիչ վարդապետի, որոյ յիշատակարանն է ‘‘ Գարձեալ երես ի գեանի եղեալ աղաչեմ ի մաքրափայլ աղօթից ձերոց, ով սրբասնունդ հանդիպողք սուրբ գեղեցկանկար և աստուածաբան տառիս, յիշեցէք ի Քրիստոս զվերջին ստացող սորին զՏէր Մկրտիչ բազմաշխատ վարդապետն՝ որ է առաջնորդ Սրբոյ Կարապետիս որ ի գաւառըս Ներինջակ։ Որ և զայս ոսկիակազմ և սուրբ մատեանս աստուածային ետ յիշատակ ի սմա։ Եւ զննողք նորին զտէր Մկրտիչ քահանայն, և զԱպիխան հեզահոգին և եղբարք նորին ըստ մարմնոյ զտէր Ղազար քրտնաջան վաստակաւոր Հայրապետն ամենայն Հայոց և զտէր Ենդրէաս պարզամիտ քահանայն . . . . . ի Թուականիս Հայոց հազար հարիւր իննըսուն և վեց ,, ։

Ի. Աւետարան փոքրագիր ամբողջ գեղազարդ պատկերօք ընտիր գրչագիր գրեալ ի մագաղաթի. Թուականն և անուն գրչին անյայտ. ունի ի վերջն յիշատակարան ստացողին — Շ՚օռօթցի Յօջենց Մկրտչէ որդի մահասի Հայրապետին, այլ անթուական։

Գ. Աւետարան փոքրագիր ամբողջ գրեալ ի թղթի. ի սկիզբն ունի նօտրագիր յիշատակարան ստացողի ի տեղիս տեղիս եղծեալ, և է այս, ‘‘ Նուաստ ծառայս Աստուծոյ Գրիգորի . . . . . անք . . . . . զաստուածապատում մատեանս ի . . . . արդեանցս ի . . . ելուծին ինձ և . . . . ոց իմ . . . . անկեալ ամենից . . . . ք . սմայ յիշեսջիք յարժ . . . . թս ձեր զըստացող . . . . իմ. և որք յիշման զմեզ . . . . զինքն իւր երկնից արքայութեանն . . . . առնէ ամէն գրեցաւ Թվ. ՊԼ ,, . ի վերջ Աւետարանին Մատթէոսի ‘‘ Օգըստացաւ սուրբ աւետարանիս զգերապատիւ . . . . . զաստուածասէրն և զմարդասէրն ամենայն զարմիւք ծնողաւք և բնաւին ազգականաւք յիշեսջիք ի Քրիս-

տոս Աստուած ի քաւութիւն ամէն ,, . իսկ ի միւս երես Թղթոյն ‘‘ Վերստին ըստացայ զաստուածախօս սուրբ Աւետարանս ես նուաստ ծառայս Աստուծոյ տիրացուս ևն. . . . . և եդաք ի սուրբ ուխտն ի վանքն Ապահունեաց ի սուրբն Նիկողայոս . . . . գրեցաւ գիրս Հայոց ՌԾԱ. մարտի ԻԲ. . . . . ,, . ի վերջ Աւետարանին Յովհաննու ‘‘ ի թվականիս Հայոց ՈՒՃԱ. ի Հայրապետութեան Ս. Ներսիսեանն Տ. Յակոբայ և ի թագաւորութեան փոքրն Հ. Հայոց Յովհաննէս եպիսկոպոս սպասաւոր և վերակացու Սաղմոսավանից և Ուսուցչի սուրբ յանապատիս, տուել էր Ապարանցի մելիք Յովասափ երէցն վասն. մեք այլ տեսինք և իմացանք այս սուրբ աւետարանս որ Աստուածընկալ սուրբ նշանիս էր ,, ևն. ապա գայ նօտրգիր յիշատակարան Թուականի և գրչի Աւետարանին ‘‘ փառք ամենասուրբ Երրորդութեանն և մի Աստուածութեանն ամէն. գրեցաւ Ս. Աւետարանս ի թվ. ՉՕԲ. ի մեծ դըպրատանս որ կոչի Գալիձոր ի վարժապետութեան մեծիս Նահապետի, և եռամեծին Գաւթայ, ձեռամբ անիմաստ գրչի Տիրատուր Կիլիկեցւոյ ,, ևն:

Գ. Աւետարան մեծադիր փառազարդ պատկերօք և նկարուք. ընտիր գրչագիր գրեալ ի մագաղաթի, ամբողջ մի երեսն արծաթաթապատ, յորում և պատկեր մկրտութեանն Քրիստոսի. ի բուն սկիզբն ունի յիշատակարան Տէր Աւագայ, զնողն զայս աւետարան ի Թուականին ՋՀԶ, և տուողն ի դուռն Ս. Նշանին վասն. ի վերջն ընդ երկար յիշատակարան ստացողն նորին Վարդան կուսակրօն քահանայի, ‘‘ . . . . իսկ ի Թուականիս Հայոց Հ. յամն աստուածապատիւ մեծի կաթուղիկոսիս Հայոց և հասարակաց Հայրս Տեառն Կոստանդեայ, զոր Տէր Աստուած ընդ առաջին հայրապետացն դասեսցէ. ընդ որս ես Վարդան նուաստ ծառայ Քրիստոսի և աշակերտ սուրբ տանս և ըստ շնորհացն Աստուծոյ ըսպասաւոր և փակակալ մեծափառ Տաճարացս Աստուծոյ տանս հայրապետական, աստուածապահ դղեկիս որ կոչի Հռոմկլայ . . . . . :

Ն. Աստուածաշունչ մեծադիր ամբողջ և անարատ, գրեալ ի մագաղաթի ընտիր գրչագիր, ոսկենկար և փառազարդ պատկերօք շքեղացեալ. ի վերջն ունի ձիգ յիշատակարան Թորոս Վ. ստացողի գրոյն, ‘‘ Եղև սկիզբն գրոյս և աւարտումն կոստանդնուպոլիս ձեռամբ Աստուածատուր դպրի ի Թվականութեանս Հայոց ՈՀ. . ի ներքոյ սորին գայ և հետևալն. ‘‘ Ի թվին ՈՀԻՀ. ի հայրապետութեան տեառն Յակոբայ եղաւ սուրբ տառս ի վանս Երինջակայ ի վայելումն հեզահոգի մեծ վարժապետին Նահապետ, զոր յայսց աւուրըս նոր նորոգեալ կոփածու վիմով և գեղեցկազան յօրինուածով զսուրբ եկեղեցին որ Ս. Կարապետ վերաձայնի, որ և իսկ յորդորիչ եղև սուրբ գրոյս, զի անջնջելի յիշատակ կացցէ ի սուրբ ուխտս Ապրակունեաց ,, :

Օ. Աստուածաշունչ մեծադիր ոսկեզօծ նկարուք և փառազարդ պատկերօք ընտիր և զարմանալի գրչագիր գրեալ ի մագաղաթի ամբողջ. իսկ շատք ի պատկերացն և նկարացն մնան դեռ թերիք և շատիցն դեռ տեղիքն թողեալ մնան առանց սկսանելոյ. չունի յիշատակարան:

Ի. Աստուածաշունչ մեծագիրը գրեալ ի մագաղաթի ընտիր գրչագիր ծաղկանկար. այլ ի խոնաւութենէ ի տեղիս տեղիս եղծեալ և խրթնացեալ. ունի երկար յիշատակարան, յորում և պատմին համառօտիւ արարք և խռովութիւնք Դղեակաբուս Ընթապցւոյ. ստացող գրոյն է Յահկեցի Հայրապետի որդի խօջայ Ամիրզան, որ «եւ յիշատակ զսա անջնջելի և անանց առ սուրբն սիօն, բարձրաբերձ գահն, և յերկնաքաղաքակ աթոռն Երընջակու .... ի թուականութեանս Հայկականի սեռի ՈՒՀ՛ և ԺՊ ամի ի ծովապար և յորքայանիսա քաղաքն Ըստամբուլ»:

Ը. Նարեկ միջակագիրը, անթերի գրեալ ի թղթի ի թուին ՈՒՀ՛ՕԸ:

Թ. Աշտոց, գիրք ծիսակատարութեան, մեծագիրը գրեալ ի մագաղաթի ընտիր գրչագիր. չունի յիշատակարան:

Կաբաճ Մենասականց.

Մենաստանս ունի հարիւր խալվարաչափ հող, յորմէ քառասուն խալվարն անջըրդի. նմանապէս այգի մի, ծառատունկ պարտէզք երեք, ջրաղաց մի և ձիթահան մի:

Ընդհ Մենասականց.

Այս վանքի արդեանց աղբիւրներն են, երկրագործութիւնքն, յուխտաւորաց գոյացեալ նուէրք, Արդավառի հանդիսաւոր ուխտի արդիւնքն, և սրբոց մասանց ըստ սովորութեանն ի Նախիջևան և յայլուր տանելն:

Շինաճ Ենասականց.

Վասն տարի յառաջ այս վանքը գրեթէ օրինաւոր սենեակներ ունեցած չէ կրօնաւորաց և հիւրոց բնակութեան համար բայ ի հարաւակողմն եղած «առաջնորդարան» ասացեալ թաղակապ երկյարկ տները, մինչև որ Երեմիա վարդապետ յաւուրս իւր կանգնել տուած է քանի մի սենեակներ:

Պերճեղմանապան.

Հիւսիսակողմն պարսպի մօտ փոքրիկ բլրակի վերայ է դերեզմանատուն վանից, ուր ամիսփուաճ են մարմինք միաբանից տեղւոյն. նոյն կողմն դարձեալ, բայց բուն պարսպի տակ կան քանի մի դերեզմաններ, որք կկրեն խոյաձև տապանաքարեր. կերեւին սոքա բաւական հին, բայց դժուար է որոշել թէ որո՞յ ժամանակի, և որո՞յ մարմինքն են ամփունացեալ. մօտ օրերս դիպուածով երևեցան հարաւային պարսպին տակ քանի մի դերեզմանք՝ որք մինչ ցարդ աննշմար անյայտացած էին խճանիւթ կարկառին մէջ. ի ներքուստ ամենքն մաքուր բռած և յարդարած փոքրիկ խրճթիլիներ էին, ուր կային միայն ոսկերոտիքն, ղրս ի նկատի առնելով, դուցէ ակամայ ձշդըրտած լինիմք Օրբելեան Ստեփաննոսի այս խօսքերը «Ոչի դոն աստ դերեզմանք հայրապետաց, որք էին պատահմամբ եկեալ վասն ամրութեան բերդին ի ժամանակս եպիսկոպոսացն Սիւնեաց, և անդ վախճանեալ»: (տես Պատմ. Սիւնեաց Ս. Օրպ. հատ. Բ. եր. 110, ի լոյս ընծ. Կ. Վ. Շահնազ):

(Շարունակելի:)

ՀԱՑԱՍՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ *).

1827-ին Գաղղիոյ կառավարութեան տնօրէնութեամբ պրօֆեսսոր Շ. ուլյը Հայաստան գնաց — տեղւոյ հնութիւնքն հետազօտութեանց առնլոյ, յատկապէս Վ.ան քաղաքի մէջ՝ որ համանուն լճի եզերքումն է գտանուում: Այս պրօֆեսսորը յաջող գործունէութեամբ ինչպէս Վ.ան քաղաքի մէջ՝ նոյն և համանուն լճի շրջակայքում շատ սեպագրութիւններ գտաւ, զորս մեծ խնամքով օրինակելուց և որոց վերայ կարևոր ծանօթութիւնք ևս յաւելացնելուց յետոյ՝ Գաղղիոյ կառավարութեան ուղարկեց: Ընտրս որ վերոյիշեալ պրօֆեսսորը իւր ուսումնական հետազօտութեան արգասիքն ինքն ի լոյս ընծայել չկարողացաւ, Ջ. ուլամերչի Վրդերի պետի դաւաճան սպանութեան զոհուելով: Նորա օրինակած գրութիւնքը որ թուով քառասուն երկու հատ են, Ասիական ընկերութեան օրագրի 1840 թ. 52 համարումն են տպուած: Գրեթէ այդ իսկ ժամանակն էր որ Բերլինի Աշխարհագրական ընկերութեան գործունէութեան մասին հրատարակուած ամնական տեղեկութեանց մէջ Ընդյան 1840 թ., միբևեռաձև արձանագրութեան օրինակը հրատարակուեցաւ: Այդ արձանագրութիւնը երկբաչափ Միւլլերն էր գտել Մալաթիայի մերձակայքում Եփրատայ վերին մասերի մօտ, դոքա ևս վերոյիշեալների տեսակիցն էին:

Ընկարծեմ թէ բևեռաձև նշանագրոց զանազան տեսակները բոլորին ընդհանրապէս ծանօթ լինին, ապա ուրեմն կվըստահիմ համառօտ ծանօթութեամբք նիւթըս աւելի դիւրահասկանալի առնել:

Սեպագիրը կամ բևեռագիրը, որ այսպէս անուն է ստացել, որովհետև յատկապէս պարզ և կրկնակի այս ինքն անկիւնաչափի ձև ունեցող սեպերից կամ բեւեռներից է բաղկանում, բաժանուում է երկու գլխաւոր տեսակի՝ ոչխական և անոչխական: Առաջին տեսակի՝ որն աւելի հասարակն է, կարդալու գլխաւոր կանոնները գրեթէ 70 տարի առաջ արդէն պարզաբանել է հանգուցեալ Գրօտֆենդի ուսումնականը, և որովհետև սորա աշխատութիւնքը վերջերումս Նասվի, Խորնուգի, Ժաքէի, Ռէհրի, Լասսենի, Նավլինսոնի, Ռէնդգէի և Շպեգելի ջանիք շատ կատարելագործեցան, վասն որոյ այդ բաժինը վերջացած համարել կարելի է: Ընձանագրութեանց այս տեսակի լեզուն Սանսկրիտ և Զենդ լեզուներին ազգակից է ընդունուեր, որ Պարսկական դիւանական լեզուն էր Աքեմենիդաց օրօք:

Երկրորդ տեսակն՝ այն է անոչխականը, աւելի բաղադրեալ է և շատ զանազան ճիւղեր ունի, ինչպէս Ա՝ Սկիւթական կամ Սուզիանականը, որոյ 110 ից մինչև 120 նշանագրերով գրուած արձանագրութեանց լեզուն իւր կազմուածքի վերաբերութեամբ իրրև հին Թուրքիականն է ընդունուում, ենայելով որ շատ անարիական տարրեր է բովանդակում իւր մէջ. սա երևի թէ հին Սուզիանայի լեզուն է

*) Այս յօդուածը Աուգսբուրգի [« Հանրական լրագրի», 1871 Թուի դեկտեմբերի 21, 22, 23, 24 համարների յաւելուածումն է տպուած. սորա ստորագրութիւնն է Դոկտոր Ա. Դ. Մորդման, ի Պօլիս. 1871, Նոյեմբեր.

եղած. Ր՝ Ասորական — Նաբեղականը, որ շատ խառն ու շփոթուած է, 600 ից մինչև 700 նշանագիրք է պարունակում իր մէջ և Սեմական լեզու ունի: Այս ձիւղին է պատկանում Նաբեղոնի ու Նինուէի բոլոր արձանագրութիւնքը. այն չնչին զանազանութիւնքը, որ Նինուէական և աւելի նորագոյն Նաբեղական արձանագրութեանց մէջ են գտանվում, քննութեան չեն ենթարկուում այս տեղ: Գ՝ Հայկականը, սորա Հայկական կոչուելու պատճառն այն է՝ որ միայն Հայաստանի սահմաններում գտնուած բևեռագիր արձանագրութեանց մէջ է գործածուած: այս ձիւղը 120 ից մինչև 130 նշաններ ունի. լեզուն մինչև յայսօր տակաւին անծանօթ է մնացեր:

Այս անարիական տեսակը դարձեալ շատ ձիւղեր ունի, որոնք մեր նիւթի վերաբերութեամբ նշանակութիւն չունին: Բայց սոցա բոլորեցունց միմեանց նման լինելու և իրապէս արիական կամ Պերսեպօլիտական տեսակէն զանազանուելու այն է միմիայն պատճառ, որ սոքա բազմաթիւ ընդհանուր նշաններէ զատ, ունին այլ և տեսակ մի նշանագիրք՝ զորս գիտնականք բացայայտիչ և դաղափարագիր կկոչեն: Առաջինքն՝ այն է բացայայտիչքը՝ քանի մի որոշեալ բառերի առջև են դրուում նոցա իմաստը յառաջագոյն ցուցանելու աղագաւ. զօր. ուղղաձիգ պարզ բևեռ մի՝ արիական յատուկ անուն մի կնշանակէ, միւսները աստուածներ, իգական անձինք, աշխարհներ, գետեր, քաղաքներ, կենդանիք, բուսական կամ հանքային առարկայք և այլ այսպիսի իրեր կորոշեն: Երկրորդքն՝ այն է դաղափարագիրքը ընդհակառակն, մի եզակի խմբի միջոցաւ որոշեալ դաղափարներ են յայտնում. զօր. թագաւոր, երկիր, քաղաք, ծով, ոչխար, եղ և այլն: Այս բոլոր բացայայտիչքն և դաղափարագիրքը վերոյիշեալ երեք ձիւղերուն ևս ընդհանուր են, այս ինքն մի և նոյն նշանը որ մէկ ձիւղի մէջ ‘‘ոչխար,, բառը կընշանակէ, միւս ձիւղերուն մէջ ևս նոյն իսկ դաղափարը կորոշէ: Մեր Եւրոպական լեզուաց մէջ ևս նմանութիւն կայ, մեր թուոց նշանները դաղափարագիր են. եթէ մէկը դրքի մէջ 4 թուանշանը տեսնէ, Գաղղիացին ‘‘քաթր,, կկարդայ, Գերմանացին ‘‘Ֆիր,, Անգղիացին ‘‘ ,, և այլն. բայց ամենքն ևս միևնոյն ժամանակում մի և նոյն թիւն են մտածում՝ այն է 4 թիւը: Եթէ յիշեալ նշանագրի մօտ տեսնուի 16 նշանն ևս, Գերմանացին . . . կկարդայ, Անգղիացին պո՜նդ, բայց մի ձիշդ հետախուզութիւն ևս մեզ կուսուցանէ թէ այդ նշանագիրը երկու տառերից այս ինքն L ից B ից բարդուած է, ուրեմն իսկապէս libra (լիբրայ) livre (լիվր) պէտք է կարդալ, որից իսկոյն յայտնուում է թէ Եւրոպիայի որ կողմերից է դտել այդ դաղափարագիրը իւր ծագումը: Հիւսիսային արևմտեան Գերմանիայում, որ տեղ գերմանական տէրութեան համար առաջարկուած դրամական չափը, մարկը, արդէն դարերով գործադրուած էր, կայ մի դաղափարագիր՝ որ ոչ այլ ինչ՝ բայց միայն Հիւսիսային Գերմանական արտադրութեան J տառը, որն իրեն փիւնիկական դաղափարին աւելի մօտ է քանց մեր K տառին, այս է Մարկ (Mark) բառիս վերջին տառը:

Անարիական տեսակի այն երկու առաջին ձիւղերի օգնութեամբ, որի մէջ լե-

զուարճանքներն արդէն իրար հետ յարաբերութիւններ ունենալով բաւական յառաջադիմութիւն ցոյց տուած են, կարելի եղաւ այնուհետեւ դեռ բաւական կանուխ այս Հայկական սեպագրութիւնքն ևս կարդալ ու բացայայտիչների և դաղափարագիրների միջնորդութեամբ մինչև անգամ հատ հատ անուններ ևս դուրս բերել միջից: Բայց սորանով և վերջացաւ ամեն բան. միայն թէ շատ շուտով խոստովանեցին եղաւ, որ այս տեղ մի նոր բոլորովին անծանօթ լեզուի հետ գործ ունէին և այս պատճառով բովանդակութիւնը միայ անբացատրելի:

Ընդ առեպ աչքի ընկնող զարմանալի սերտութիւնը նայելով, որով Երևելքը ամուր պահպանում է իր հին անուններըը, ցանկալի էր ինձ Ննկուրատային կամ Կարայի տեղն ընդունել կամ Կարիտէ-ին, երկուսն էլ Պայմիրայի և Դամասկոսի մէջ տեղ գտնուող ճանապարհի վերայ են. Կարիտէ-ինը այնու ամենայնիւ շատ հին տեղ է. Ռէլագօրին պատմում է իր աշխարհակալութեանց անունով գրքի մէջ, եր. 112. (ed. de Joeje; Luyduu 1866), թէ Խալիդը որ Եաբեղնից դէպ ի Յեօնիրիա խաղալու ժամանակ այս տեղից է անցել, թէ այդ տեղն ուրեմն Խալամի ժամանակներից արդէն կար: Ես գտայ այն տեղ նմանապէս հին գրութիւններ մի այնպիսի ժամանակից մնացած, երբ այն տեղ դեռ քրիստոնէութեան մէջ չկար: Կարայի մէջ չգտայ ես ոչ մի հին յիշատակարան, բայց տեղը այնու ամենայնիւ մի շատ հին տեղ է և ես մի քանի ուրիշ պատճառներից կարծում եմ որ մեր արձանագրութեան միջի Ննկուրատացին այժմու Կարիտէ-ինն է:

Ընդու ամենայնիւ երկու գիտնականք քանի մի տեղեկութիւնք հանեցին այս անմատչելի նիւթէն: Վաղուց արդէն Ռավլինսօնը ընդունեց (խոստովանեց) որ այս արձանագրութիւնքը հին Ասորեստանի թագաւորութեան կործանման և Քեմենիդաց տէրութեան հիմնուելու ժամանակամիջոցին են վերաբերում, ուրեմն մերձաւորապէս 750 ից մինչև 550 Թուականը նախ քան Քրիստոսի Ծնունդը. Նմանապէս նա ընդունեց որ այդ արձանագրութիւնքը այն հինգ զանազան միապետներին են վերագրուելու որոնք Ժառանգաբար յաջորդեր են միմեանց:

Այս արձանագրութեանց մեծ և ուշադիր աշխատանք է նուիրել Հանգուցեալ Էդուարդ Հինքսը, որոց արդիւնքը 1847 Թուին Դեկտեմբերի 4ին մատուցեր է Մեծին Բրիտանիոյ և Իրլանտիոյ ''Ասիական ընկերութեան,,: Թէև այս գիտնականը չկարողացաւ գտնել արձանագրութեանց ամբողջ իմաստը, սակայն հետևեալ կետերի պարզաբանութեան նկատմամբ դարձեալ անժխտելի է նորա երախտիքը, ա՝ որ Ռավլինսօնին համաձայն այն ժամանակը և այն միամիտները՝ որոնց պատկանում են այս արձանագրութիւնքը, ճշդիւ որոշեց. բ՝ որ կարևորագոյն արձանագրութեանց մէկի ճիշդ իմաստը պարզօրէն բացատրեց. գ՝ որ արձանագրութեանց մէջ գործածուած թուարկութեան ճիշդ մեկնութիւնը ընծայեց. և դ՝ որ արձանագրութեան լեզուի արիական արմատին պատկանելը անհերքելի կերպիւ ապացուցեց: Վերոյիշեալ գիտնականի այս ամենայն և բաց ի սոցանից փոքր նշանակութիւն ունեցող ուրիշ իրերը հասկանալու նպաս-

տիչ միջոցը երկու միայն բառից ծանօթութիւնն էր, այն է ապա կամ ապակ՝ որ կընշանակէ ,,նա կխօսէ,,։

Հինքսի այս աշխատութենէն եաքը, որ վերոյիշեալ ընկերութեան 1848 թուի օրագրումն տպագրուեց, ուրիշ փորձ չայտնի չէ ինձ, որ յիշեալ արձանագրութեան լուծման կամ մեկնութեան համար ի գործ դրուած լինի, այն ինչ այս ժամանակամիջոցին պատրաստի եղած արձանագրութեանց թիւը աւելցաւ։

Լայարդը Նփրատի վերին մասերում, Խալուի մէջ արձանագրութիւն մի օրինակել է, որ 1851 ին հրատարակեց Լոնդոնում։ (կաճառորդ ձեմարանական) Ռ՛եմարանի անդամ կեստները Ռուսիոյ Հայաստանում երկու արձանագրութիւն էր օրինակել, զորս 1865 թուին Պետերբուրգի ձեմարանը ի լոյս ընծայեց։

Հ. Ներսէս Սարգսեանը 1864 թուին Վենետկում Մեծ և փոքր Հայաստանի տօրադրութիւնը տպագրեց, յորում վեց օրինակած արձանագիր կը գտնուի։

Նշմարիտ ,,Բերատ,, ամսագրի, 1869 թուի Հոկտեմբեր, Նոյեմբեր—տետրակաց 138 երեսում, 1870 թուի փետրվարի—տետրակի 248 երեսում և 1870 Սեպտեմբերի — տետրակի 175 երեսում երեք ուրիշ արձանագրութիւնք հրատարակուեցան, զորս Հ. Մեսրովբ վարդապետ Սմբատեանն է գտեր Ըրմաբրում և Յօլակերտում։

Տոքթոր Դէ Ռօբեռտ Իտալական աշխարհագրական ընկերութեանը երկու արձանագրութիւնք ուղարկեց, զորս հրատարակեց ընկերութիւնը իւր 1870 թուի Օրագրումը։

Վերջապէս քանի մի արձանագրութիւնք ևս, զորս իմ Հայաստանում եղած բարեկամներէս եմ ստացեր և դեռ տպագրուած չեն։

Ա յս նոր արձանագրերէն շատերը, իսկզբան Հ՚ուլցն էր օրինակեր, բայց մեկի միւսի հետ համեմատութենից մեծ օգուտներ կարելի է քաղել։ Հ՚ուլցի օրինակած արձանագրութիւններէն երեքը Վասերքսես թագաւորին են վերաբերում, զորս հարկաւոր է ի բաց հանել վերոյիշեալ 40 հատ արձանագրութիւններէն։ Ա յժմ ինձ մօտ գտնուած նիւթը 50 հատ արձանագրութիւններից է բաղկանում։

Հատ հաւանական է որ այս արձանագրութեանց լեզուն գրաբառ է այսինքն նախնի Հայկականը, բայց և մեծ համարձակութիւն կլինէր, եթէ այդ ենթադրութեան վերայ միայն հիմնուելով՝ վըստահութիւն առնուինք բնագիրը Հայկական լեզուաւ մեկնել. սակայն մի մօտալուտ քննութեան շնորհիւ քանի մի բառեր ճանաչելի շատ շուտով և կատարեալ վըստահութեամբ, յորս բացայայտիչքը ևս գործոյս մեծ դիւրութիւն կընծայէին, նա մանաւանդ որ բոլոր կարդացած բառերն ևս գտանուում են Հայկականին մէջ, և ի հարկէ այսպիսի փոփոխութենից ենթարկուած, որպիսեաց ենթարկուում է և ամենայն լեզու յընթացս քանի մի հազարամ ժամանակի։ Նա այսպէս առանց իւիք երկբայութեան Հայոց լեզուի օգնականութեամբ նոյն և բացայայտիչներու, գաղափարագրերու և ուրիշ այլ իրերաց միջնորդութեամբ կարողացայ բոլոր արձանագրութեանց գլխաւոր իմաստը հասկանալ և մեկնել։ Ա յս մեկնութեան գիտական

պատճառաբանութիւնը և արձանագրութեանց լեզուագիտական մեկնութիւնը յօդուածի մի մէջ ամփոփելը, որ ‘‘Գերմանական արևելեան ընկերութեան,, վարչութեան ձեռքն կդնենք այժմ *):

Համառօտակի կյիշեմ այս տեղ միայն այդ քննութեանց արդիւնքի վերայ:

Ժամանակի որոշման վերաբերեալ հարցը հետևեալ հանդամանքից է պարզուում, որ կարդով ժառանգող թագաւորներից չորրորդը՝ իրեն Ասորեստանեայց դէմ արած արշաւանքներն է նկարագրում. նա Ըզզուում էր այն ժամանակում երբ Ասորեստանեայց երկրորդ թագաւորութիւնը դեռ կար, այն ինչ նորա որդին և յաջորդը՝ որ հինգերորդ թագաւորն էր, իւր Բաբելոնի դէմ արած արշաւանքն է նկարագրում, ապա ուրեմն ակներև է որ այդ միջոցին վերջացած պէտք է լինի Ասորեստանեայց թագաւորութիւնը, եթէ ոչ Հայաստանի և Բաբելոնի մէջ պատերազմ լինել չէր կարող: Բայց որովհետև Ասորեստանի տէրութիւնը Քրիստոսից 600 տարի յառաջ վերջացաւ և Նինուէն Բաբելոնեան տէրութեանը հետ միացաւ, ապա ուրեմն առանց մեծ սխալանք մի անելու՝ այդ թիւը կարող ենք իրրև դարագլուխ ընդունել. այդ ժամանակն էր որ մեր կարդի չորրորդ թագաւորը վաղճանեցաւ և որդի որդին իրեն յաջորդեց: Եթէ առաջին չորս թագաւորաց իւրաքանչիւրի համար 25 տարի հաշուենք, մերձաւորապէս 700 տ. Քրիստոսից առաջ կուգանք այն ժամանակահատին, ուրեմն երբ Տիլ Գարպիլասար, Սարդինան և Սենեքերիմ արշաւանքներ բացին դէպ ի հարաւ Բաբելոնի և դէպ ի հարաւային արևմուտք Ասորւոց աշխարհի, Փիւնիկէի և Պաղեստինու վերայ:

Այն տէրութիւնը, որոյ իշխանները մեր արձանագրութեանց մէջ յիշուած թագաւորներն էին՝ Պիտմայ կկոչուի. այս անունը Հայաստանի աշխարհացուցի վերայ չէ գտնուում: Ընդհակառակն նոյն արձանագրութեանց մէջ ուրիշ բազմաթիւ անուններ ենք գտնում, որոնք ոչ միայն միջնադարեան՝ այլ և այժմեան աշխարհացուցի վերայ ևս կգտնուին:

Այդ աշխարհի մայրաքաղաքը Տ-ոպ անունը կկրէր, ինչպէս որ ըստ Մովսիսի Խորենացւոյ (Գիրք Գ. գլ. 35) Վանի քաղաքը Տոսպ, ըստ Պտղոմէոսի Վանայ ծովը Թոսպիտ և քաղաքը Թոսպիա անունները կկրէին (Աշխարհագր. Պտղոմ. Ե. 13. Յօդ. 7—19):

Արձանագրութեան մէջ յիշուած առաջին թագաւորը Խազրիտուր Ա, Լուտիբրի որդին, որոյ տիտղոսը, ինչպէս և Ասորեստանեայց բոլոր միապետներունը, հետևեալն էր, ‘‘Արքայ արքայից, մեծն արքայ, արքայ մեծամեծ զօրաց,,. բայց թագաւորութիւնը Պիտմայ անունը չէր կրում դեռ ևս, այլ Մայրի, որ անտարակոյս Մեդաց աշխարհը՝ Հայերէն Մար անուան նման է, և այդ անուան այդ տեղ յիշուելուն երևի այն է պատճառ՝ որ Ասորեստանեայց իշխանութեան ժամանակ Հայաստանը կամ գոնէ նորա արևելեան մասը Մեդաց աշխարհով հանդերձ Ասորեստանի մէկ նահանգն էր կազ-

(*) Յիշեալ յօդուածը՝ որ մեր ուսումնասիրաց գնահատութեան արժանի է, ցաւօք սրտի կհաղորդենք որ դեռ լոյս տեսած չէ, վասն որոյ և աստ անյիշատակ. Ս. Թարէ.

մում։ Նագրիտուր առաջին թագաւորին պատկանեալ մի միակ արձանագրութենէն զատ, ուրիշ տեղեկութիւն չունինք, վասն որ կցկտուր և նոյն ինքեան Շ. ուլյի խոստովանութեամբը դուժէ և սխալ օրինակած լինի։

Նորան յաջորդեց իւր Խպոյնիս որդին, որ երևում է թէ շատ երկարատև թագաւորութիւն է ունեցեր. բայց սորան էլ միայն երկու արձանագրութիւն է նուիրած. հնագոյնը ամրոցի մի շինութեան վերայ կխօսի. երկրորդը շատ նշանաւոր է և ՚ինքսի նկատմամբ պատմագրական և աղդագրական կողմանէ հին արձանագրութեանց մէջ ամենանշանաւորն և հետաքրքրականն է. բայց յայսմանէ շատ դիւրահասկանալի և կրկնակի է դրուած, այս ինքն երկու անդամ է փորուած բնագիրը, նախ 31 տողով, յետոյ 63, այնպէս որ երկու դրութեանց ապատաղեալ կտորները փոխադարձն են լրացնում։ Իսկ թէ ի՞նչ դադտ մի մինչև յայդ յանձնառու չեղաւ այս վերին աստիճան նշանաւոր արձանը քննելու, ինձ բոլորովին անհասկանալի է։ Խպոյնիսն և իւր Մինուաս որդին միշտ միասին են անուանում այս արձանագրութեան մէջ, ուստի շատ հաւանական է որ Խպոյնիսն իւր ծերութեան պատճառաւ Մինուաս որդին իրեն թագակից է ընդուներ։ Եւ ինչպէս վերը յիշեցինք, Խպոյնիսի երկարատև թագաւորութիւնը երևում է ուղղակի իրեն պատկանեալ երկու արձանագրութիւններին. այս արձանագրութիւնք թէ լեզուաւ և թէ նշանագրութեամբ այնպիսի փոփոխութիւնք են ցուցանում, որոնք սովորաբար երկար ժամանակեայ միջոցում միայն կարող են երևան գալ։ Խպոյնիս և նորա որդին Մինուաս յիշում են այս արձանագրութեանց մէջ, որ իրենք իւրեանց երկրի բոլոր աստուածոց զոհ են մատուցեր. յիշատակուած է այս տեղ նոյնպէս և իւրաքանչիւր աստուածոյ անունը առանձին, աստուածոց մատուցած զոհերը՝ որոնք առհասարակ եղերից և ոչխարներից էին բաղկանում և մէկ անգամ միայն ուղտերից, նոյն և այդ զոհերի որքանութիւնը։ Վաթսունից աւելի զանազան աստուածներ իրենց մատուցուած զոհերի որքանութեան կարգաւ են յիշատակուում այս տեղ։ Վերջին ժամանակները այդ անուանց մեծագոյն մասը Ասոյց և Պարսից պատմութեանց մէջ շատ յաճախ իրրև յատուկ անուն է ընդունուեր։ Այս արձանագրութեան մասին դարձեալ կխօսեմք վերջը։

Երձանագրութեանց մեծագոյն մասը Մինուաս թագաւորին է պատկանում. թուի թէ սա էլ՝ ինչպէս իւր հայրը՝ երկարատև թագաւորութիւն է ունեցեր։ Վերոյիշեալ արձանագրութեանց մեծ մասը Մինուասի մեծագործութեանց են վերաբերում, որ ի հարկէ մինչև ի կատար հասուցանելն երկարատև ժամանակի կարօտութիւն կզգացուէր։ Այս մեծագործութեանց կարգն են անցնում զօ. կառավարչական շինութիւնները, իւրաքանչիւր աստուածոյ համար առանձին բագիններ, մի արգելանոց, Վանայ ծովի մօտ՝ մի արքունի ճանապարհ, ուր դուրգ մինչև ծովի ափը տարածուած ապառաժները ճանապարհը արգելում էին ևլն։ Երձանագրութեանց մէջ յիշատակութիւն կայ նոյնպէս Մինուասի պատերազմական ձեռնարկու-

թեանց մասին. այդ տեղ յիշուած քաղաքներէն և աշխարհներէն կերևի թէ արշաւանքի ուղղութիւնը Վանայ ծովի հարաւային ափերով դէպ ի հարաւային արևմուտք է եղած. ցաւալի է միայն որ արձանագրութեան աղաւաղելի վիճակը թոյլ չէ տալիս մանաւոր հանգամանքները վստահութեամբ որոշել: Սակայն Խալուի մէջ Լայարդի գտած արձանագրութիւնք յիշատակութիւն ունին Մինուասի մինչև Նփրատ գետոյ վերին մասերն արած արշաւանաց մասին, որոյ նպատակը Խատիւա և Խուդիրա աշխարհներն էին գլխաւորապէս. հաւանական է որ դոցանից առաջինը Խոյն է, որ Վանայ ծովի արևմտակողմն է ընկնում, իսկ երկրորդը Խուդիրա նահանգն է իւր Խուզամայ մայրաքաղաքով, որոյ նմանը չկարողացայ գտնել և ոչ մի տեղ. սակայն հարկաւոր է Խալուի մերձակայքումը փնտռել: Մինուասը այս արձանագրութեանց մէջ յիշատակում է նոյնպէս որ իւր արշաւանաց ժամանակ քան քաղաք ինքնայօժար անձնատուր եղած են իրեն:

Ներևի թէ Մինուասը հիւսիսային արևելք ևս տարածեր է իւր արշաւանքը, վասն զի Կէստների Երասխ գետոյ աջ ափի վերայ Երմաւիր քաղաքի հանդէպ օբինակած արձանագրութեան մէջ ևս յիշատակութիւն կայ Խսպոյնիսի Մինուասի որդւոյ անուան մասին, թէ և այդ արձանագրութիւնը շատ աղաւաղեալ և կցկտուր է: Խայց և հաւանական է որ այդ կալուածքը դարձեալ կորուսուած լինի, վասն զի նորա որդին և յաջորդը մեծ և ծանր պատերազմներ ունէր Վանայ ծովի և Երասխայ ընդարձակ միջնավայրում:

Ուրիշ արշաւանք միևս արեր է Մինուասի արևելեան հարաւակողմում Ռուբդաց Դխա-գան անուն պետի դէմ. այս անունը Ռերականական ստուգաբանութեամբ Յունաց Դիոդինէս անուան է համապատասխանում. զոր կարող եմք Մարաց Դէյոկէս անուան հետ ևս համեմատել. այս իշխանի ձեռքն ընկաւ Դխաւիգանի Ուտիբուբսինի որդին: Խայց կերևի որ վերջը Դխաւիգան դարձեալ թշնամացաւ Պիայիմային, որովհետև Մինուասի որդին և յաջորդը վերջը դարձեալ պատերազմ ունեցաւ նորա հետ:

Ի զուր կլինէր մեր այս անուննները Ֆայ պատմագրութեանց մէջ որոնելը, որոց ամենահինը մեր թուականի չորրորդ դարուն է պատկանում. բայց նրանց այնու ամենայնիւ երևում են: Մովսէս Խորենացին աւանդում է մեզ Ֆայոց թագաւորաց յետագայ անուննները՝ ա. Պարոյր որդի Ակայորդւոյ, բ. Ֆրաչեայ, գ. Փառնաւազ: Ուրեմն Փառնաւազը ըստ կարգի Թւոյ մեր Մինուասն է: Մեր դրութեան մէջ այդ բառերի պարզ նմանութիւնը նկատելի չէ, իսկ Ֆայոց բևեռաձև նշանագրոց մէջ զանազանութիւնը շատ աննշան է. ֆաա վանկը ուղղաձիգ և հորիզոնական բևեռներով կգրուի, որոնք միմեանց կխաչուին. Ֆ վանկը ուղղաձիգ բևեռով, իսկ աջ կողմը հորիզոնական բևեռով կգրուի. ուրեմն բաւական է որ այսպիսի արձանագրութեան մէջ քարետախտակը փոքր ինչ ճեղքուի կամ իւիք մի աննշան աղաւաղութիւն ստանայ, և յայն դէպս ահա Փառնաւազի տեղ Մինուաս կկարդացուի: Ո՞ւմ է յայտնի թէ արդեօք ինչ վտանգից և փորձութեանց է

ենթարկուեր պատմութեան նախկին խուզարկողը, որից Մովսէս Խորենացին տեղեկութիւններ է քաղեր կամ հաւաքեր։ Վերոյիշեալ փաստի վերայ հիմնուելով՝ Ագաթան մեր արձանագրութեան մէջ յիշատակուած Խոպունիան է. այս անուններըը թէ և իրար նման չեն, բայց ըստ Մովսէսի Խորենացւոյ Ագաթան իւր անունը հրալեղ աչերուն համար ստացաւ, ուրեմն հաւանական է որ իր կենաց առաջին օրը չստացաւ, այլ որոշեալ հասակ առնելէն ետքը տրուեցաւ նորան այս անունը, որ մականուն մի է ի հարկէ, ինչպես Բարբարոսա։ Բարբարոսա և Ֆրիդրիխ նմանապէս իրար նման չեն, բայց ամենեցունն ևս յայտնի է՝ որ այդ երկու անուններըը մի և նոյն թագաւորին են պատկանում։ Պատրոյգն մեր արձանագրութեան Բագրիտուրըն է, այս տեղ նմանութիւն չկայ ի հարկէ, բայց հարկ չէ մոռանալ, որ Խորենացին Այկական հնագոյն բևեռագիր արձանագրութիւնը քանդակող ճարտարապետից 1200 տարի յետոյ է գրեր իւր պատմութիւնը։

Արդ կհամարիմ յիշել նոյնպէս, որ Մինուասս անունը այսօր ևս յաճախ գործածութեան մէջ է ի Այս։

Ուրիշ արձանագրութիւն մի ևս կայ, զոր Մինուասի կողակիցը կանգնել տուեց իւր ամուսնոյ համար, երևի թէ նորա մահուանից յետոյ. այս արձանագրութեան մէջ իւր անունն ևս յիշատակուում է, որ է Տարրիա՝ այն է Տարրիայի դուստր։

(Շարունակելի)։

ՏԵՍԱՐԱՆ ՀԱՑՐԵՆԵԱՑ



Հայկական վանք ի Զորոփ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՅՈՒՊՆ ՄՈՎՍԻՍԻ

Ի ՆԱԽՆՈՒՄՆ ՀՌՉԱԿԻ ԴՈՐՍԱՐԱՆ ՀՐԱՇԵՑ·

Զի՞նչ է այդ՝ գոչեաց բարբառ Որ էին,
Ի միջոյ բոցոյն ի Քորեբ լերին,
Մինչ պատգամաւոր զծանրալեզուն,
Ուղղեր Յեգիպտոս՝ յազգին վիրկութիւն։
Զի՞նչ է՝ հարցանէր՝ այդ ի քում ձեռին,
Որ անկեալ այրեր զղալար մորենին,
Իրրու թէ կարօտ էր պատասխանւոյն,
Ուժմսունամենի քաջիկ Ծերունւոյն։
Ցուպ է, պատասխան ետ ի զարմացմանն,
Որ բոկ կայր անդէն յերկրին սրբութեան,
Ուր նախ մերձեալ էր անզգոյշ, կոշկօք,
Զգեալ նորահրաշ տեսլեամբ առ աչօք։
Քառասներորդ ամ էր վաղ քաջ անցեալ,
Զի կըրեր զայն ջոխ չոր և ցամաքեալ,
Եւ հօտից խաշանց Մադիանացւոյն,
Նովաւ գըրաւեր զաջըդ հովուութիւն,
Գուցէ զայն միայն էր հանեալ ընդ իւր,
Ի տանէն Քամայ մինչ բիրտ կշտամբիւր,
Ո՞ կացոյց զքեզ պատաւոր, իշխան,
Որ զԵգիպտացին եղեր ի կործան։
Զայդ արա կրկնեաց Աչքն հըրաշից,
Գործի անպատում անբաւ հըրաշից,
Զորս կատարել՝ տամ՝ ի ձեռս քո,
Թէ յաղթունի տան և ԹԷ արտաքոյ։
Մեք եմք Հայկազունքս Նոր Եբրայեցիք,
Հարց մեր վըիպակօք եղեալ ընկեցիկ,
Ի նորօրինակ յատակ գերութեան,
Ուսուճնատեցիկ խոր տըգիտութեան։
Իսկ Դուն՝ Նո՛ր Մովսէս Հովիւ քաջարի,
Որ կաս յանմատոյց սրբութեան վայրի,
Լուր զի՞նչ բարբառի նոյն ձայն բոցածին,
Արդ անձնաւորեալ ի Բան Կուսածին։
Թողի զիմ տեղին Քորեբ ի Սինայ,
Սիրեցի զԱզատ ծագ Արարատայ,
Ուր յաւերժակեզ բոց իմ փորձութեան,
Մշտավառ ցոլայ ի տան Թորգոմեան։
Անդ ծածկեաց զանձն իմ անուն իմ Որ Էն.
Աստ հռչակեցայ ծընունդ ի Հօրէն.
Անդ հուր և մրրիկ, սաստք փայլակնածին,
Աստ Խորան լուսոյ հանգիստ իմ անձին։
Զի՞նչ է՝ զոր ունիս՝ յաջին քում կալեալ,
Ցուպ մխիթարիչ՝ քեզ չինէն յանձնեալ,
Զայդ պատուիրեմ արդ արկանել ի կիր,
Ի փրկել Մասեաց և՛ զազգ և՛ զերկիր։
Աստուածամարտ իմ բընիկ Թշնամին,
Զոր ի մահ Հարի ի Քառասներին,
Օձակերպ ցպովք զօրեաց հրապուրել,
Ընդ Եգիպտոսի զԲաբիլոն ընտրել։

Որոտայ ընդ դէմ գերչաց քո Հօտին,
Ի մշտամռայլ ծըմեռ խաւարչտին,
Խզի գլղձայս իմ ժողովրդեան,
Տալ Հայիլ տենչիւ ի լոյս կրթութեան։
Ա՛յդ ի սեղան իմ զոհ ողջակիզի,
Ի քէն հաշտարար պատարագ ուխտի,
Շիջուսցէ զայն բոց իմոց բարկութեան,
Զոր ցարդ վառ պահեմ՝ ի տան Թորգոմեան։

ՀԵՂԻՆԱԿ ՀՐԱՇԱՐԱԿԱՆ ՈՂՋՈՅՆ

ՎԵՐՋԻՆ ՀՐԱՇԱՐԱԿԱՆ ՈՂՋՈՅՆ *)

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԲԱՐԵԲԱՐՆԵՐ·

Նայեցէք վերջին օրիս, որ ես եմ այս տեղ օտար,
Մահուան ցաւը չանս քաշեց, եղել եմ սատիկ անճար,
Կաքուեց իմ զօրութիւն, տանջվում եմ ես չարաչար,
Ցոյս դրած դէպ ի Աստուած, որ նա լինի ինձ հոգատար։

Սիրելիք, լաւ խնացէք, որ ճանապարհ պէտք է գնամ,
Գիտում եմ որ չառերից, ախ, փափազով պէտք է մնամ.
Անժամանակ մահուան ձեռքով, կենացս ծառովս կըտրանամ,
Զրկվում եմ Ձեր տեսքիցն, ես տեղից կհեռանամ։

Մնողացս կարօտները, սրտիս մէջում վառվռում է,
Հայրերիս և եղբօրս սէրները, ահ, ինձ տանջում է,
Երկնային հրեշտակն ահա կանգնած տանում է,
Ախ, թողում եմ գառնուկ զաւակս, որ յետնուցս ձայնում է։

Մի գեղեցիկ այգւոյ մէջին, ես էի մի ծառ բանաւոր,
Կանանչացած մի հատ պտղով, ուրախ էի փառաւոր.
Մահուան քամին ծառիս դիպաւ, ախ, ինչքան եմ մեղաւոր,
Զորացնում է ինձ արմատից, Ձեզ թողու վէյտ բիւրաւոր։

Դիշեր ցերեկ աշխատելով մի բարի անուան համար,
Ամենի հետ չատ խոնարհ, յոյս ունեի մնալ երկար,
Մահուան սուրն է սրտիս առել, ես լինում եմ ինչպես մի քար
Հրաժարում են միակ որդուցս, և տանում են վերին տաճար

Վայելչութիւն աշխարհիս դէպ գերեզման է վազում,
Բոլոր ազնիւ փառքերը ի հող տապան է մնում.
Ամէն ծածկեց արեգակս, ահա երկինքս է մթնում,
Նոր բացուած լոյս արևս իւր լուսիցն է խաւարվում։

Ես թողում եմ ինձ յիշատակ, միակ գառնուկ զաւակս,
Խոնարհ սէրս հարանութեան և իմ նոր հատակս,
Պահէք սիրով հոգիս վարդս և պատուական լուանեակս.
Հրամանաւ Աստուծոյ կաքաոնում է ժամանակս։

Մնաք բարեաւ իմ բարեկամք, ես չատ գոհ եմ Ձեզանից,
Ընդունեցէք վերջին ողջոյնս բաժանվում եմ աշխարհից.
Աղնիւ ծնողք և քոյրեր, միակ եղբայր անձկալից,
Ձեր աղօթք և ողորմին չկորչեք Տովհնարից։

(*) Ի բերանոյ պարկեշտափայլ հանգուցեալ ազնուածնունդ Տովմինդրայ Շահպաս Կապիտան Աարիբեկեան, որ էր հարս Պ. Մկրտչի Թորոսեան Երևանցւոյ, որը որ ինքն իսկ իւր հիւանդութեան ժամանակը գրել է. խիստ սրտմտարժ պատմութեամբ, ի 14 Նոյ. 1871 ի, եւ կարդացուեց ի Յաղմանն։

Ա Զ Գ Ա Ց Ի Ն

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՄԻՒՌՕՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Վեհափառ և Արքազնագոյն Հայրապետ ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Դ. Կաթողիկոս ի պէտս Եկեղեցեաց Հայոց կամի Աստուծով Ս. Միւռոնի օրհնութիւն կատարել ի 21ն Մայիսի ներկայ 1872 թուականիս ի Մայր Աթոռս Ս. Էջմիածնի, որոյ վասն կը փութամք ծանուցանել համայն Հայկազուն ժողովրդոց՝ հրաւիրելով զնոսա ի նոյն բաղձալի և հոգևոր մեծ հանդէս:

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ մեծապանծ և փառաւոր խորհրդաւոր արարողութեանց միոնն և գլխաւորն է Ս. Միւռոնի օրհնութեան շնորհաբաշխ հանդէս, ուստի անշուշտ եմք՝ զի սիրելի Ազգայինք մեր յամենայն կողմանց աշխարհի հոգեառնդն անձկանօք պիտի դիմեն արժանանալ նոյն վսեմ հանդիսին տեսութեան և շնորհաց մասնակցութեան, միանգամայն նաև բազմադարեան շքեղափառ վկայից և պարծանաց Եկեղեցւոյ մերոյ Ս. Վ. այրացս և անգին և արքազան հնութեանց ուխտի և այցելութեան պարտքը հատուցանելով՝ մխիթարվիլ հրճուանօք ըստ հոգւոյ:

ԳԵՐ. ԱՂԱՓԻՐԵԱՆՑ.

Ի 1-ն ամսոյս Գեր. Գրիգոր Եպիսկոպոս Աղաֆիրեանց վերադարձաւ ՅԱղէքսանդրապոլ։

ԳԵՐ. ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Հնդ. և Պարսկ. Հայոց Նորընտիր Առաջնորդ Գեր. Գրիգորիս Եպիսկոպոս Յովհաննէսեան Յ-ն ամսոյս մեկնեցաւ աստի երթալ ի Սպահան ի Ս. Խաչ վանս։

ՆՈՒԷՐ.

Մեծարգոյ Պ. Յակոբ Պօղոսեան Թօփճեանց Գղարեցի հինգ հարիւր ռուբլի նուէր առաքեց ի Նպաստ վերանորոգութեան Տաճարի Ս. Էջմիածնի։

Մեր շնորհակալութիւն կը յայտնենք հիշեալ բարեպաշտ անձին, կը գովենք նորին բարձանքը և եռանդը ի պայծառութիւն Մայր Աթոռոյս։

ԸՆԾԱՑՔ.

Մեծարգոյ Պարոնայք Նիկողայոս Տէր Յակոբեանց և Աւետիք Էնֆիկեճեանց՝ առաջինը քառասուն հատ Մայրենի լեզուէ և 10 հատ Գործնաթոյաբանութեան դասագրքեր, և միսը 5 հատ Համառօտ քերականութեան Զաւրեան՝ ընծայեցին Հոգ. Պարոցաց Վաղարշապատայ, և խնդրուած է ի մենջ՝ ի դիմաց Հոգաբարձութեան և ուսանողաց՝ շնորհակալութիւն յայտնել հիշեալ բարեպատակ ընծայատուաց։

ՄԵՐՈՆՑ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԵՆԱՑ ՆԿԱՏՄԱՄԲ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ.

(Ա. ԹՈՒՄԱՆԵԱՆ ՃԱՑՈՐՔ)։

Արդ, նայելով Հայի այդ կողմերին, այսօր Եւրոպային որչափ ալ իր ամուսնական կեանին մէջ նոր գիւտեր անէ, որքան ալ հրաշալի և հիանալի հնարքներ ձեռք բերէ, ես, իմ կողմէն կըսեմայի և կրնամ ապացուցանել ամենայն սրտով, որ Հայը իր ամուսնական օրինաց հիմնական դրութիւնը մնալի մը չափ չխախտեր, և միայն դարա արատաքին սովորութեանց կարգ կանոն դներ։ Կան մեր մէջ մի տեսակ անձինք, որոնք ինչ և իցէ կէտի չշացած, թեթեւամտութեամբ ոչ թէ միայն կարծած են թէ քաղաքական ամուսնութիւնը մի երեւելի բան է, հապա և ղՀայն գտած Անգղիացի, Ամերիկացի երեւակայելով ցանկացած են այդ կերպ մեր մէջ լինելն ալ. կան նոյնպես մի երկրորդ դասակարգի անձինք, որոնք անհեռատեսութեամբ բացատրութիւն սեպուած մի քանի լծակցաց զգուելի կեանքը իբրեանց օրինակ առնելով կարծած են, թէ Հայի ամուսնական կենաց մէջ բաժանումն լինելու կարելութիւնը, որ լիներ, լաւ կլիներ։ Այս ցանկութիւնները կարելի է թէ իրանց լաւ կողմերն ալ ունին, զորս ըմբռնելը իմ կարողութիւններից վեր է։ Սակայն ըստ իմ հասկացողութեան դորանք արտադրուած են փափկասրտութիւնից, չոլալութիւնից, վեհսրտութիւնից, և այլ բազում ազգերնաւորութիւններից. Այդ տեսակ ամուսնութիւնքը ըստ ինձ մարդկանց բարոյականը, ընտանեկան մաքրութիւնը, գերդաստանական վսեմութիւնը և այլ ամենայն օրհնաւորութիւնք կեղծանեն։ Շատ անգամ խլամականութեան առաւելութիւնները հերքել կամեցող անձինք իբրեանց փաստերից մեկն ալ այս են դրած, թէ Որովհետև այն տեղ բաժանումն կայ, ուրեմն և անդ օրինաւոր գերդաստան և ընտանեկան կենաց ապահովութիւն ու անդորրութիւն չէ կարող լինել։ Արդարև այդպէս, վասն զի Մահմետական աղչիկ մը իւր հաւատակից տղի մը հետ պսակուելն վերջը, որքան ալ այդ զուգակիցքը սիրեն մեկ զմեկ և համակրութիւնք ունեն առ միմեանս, այնու ամենայնիւ շատ թէ անպատն, նոքա կանչեն, հեռաւոփեն մի կարգին ընտանիք չեն կարող կազմել իբրեանց հասարակութեան համար։ ըստ որում բաժանումն լինելու հնարը, անչառումն ըլլալու ան ու երկիւղը իբրեանց միութեան օրից, կարող է նոցա գող չինել. կինը մարդից և մարդը կնոջից կփափագի մի բան իրան սեպհականացնել. Սակայն այն լծակիցքը, զորս քրիստոնէական սուրբ օրէնքն է միացրած, բոլորովին այլապէս են։ Եկեղեցին նոցա մի մարմին է ձեւացրած, մինչև ի մահ միմեանցից չզատուելու և չբաժանուելու դաշով։ միմեանց ընկեր և բարեկամ դառնալու, պաշտպան և պահապան լինելու պայմանաւ։ Ինչ հրաշալի կէտ, որչափ գերագոյն միացումն, որմէ հետէ, վնասք և ահ, երկանկութիւնք և դժբաղդութիւնք, յուղութիւնք և փորձանք, և այլ ամենայն դէպք և պատահմունք նոցա երկուսին է։ Նոքա իբրեանց սուրբ պսակին չեն, գիտենալով հաստատ կերպով թէ, պարտական են այս կեանքը բոլորը միասին անցուցանել, ախտաւոր են՝ անկուն ձեավ, իբրեանց վիճակը և գրութիւնը բարելաւեցնելու. Չանք են առնում անդադար, միմեանց սատար, և նեցուկ դառնալու, թէև թիկունք լինելու, տուն տեղ ձեաւցնելու, զաւակներ գարգացնելու, բարի համբաւ և համարում ստանալու, մի խօսքով, իբրեանց հասարակութեան համար մի կարգին ընտանիք կազմելու։ Բայց քաղաքական ամուսնութեամբ և բաժանումն կարելի լինող պակօք միացող, հարսն ու փեսան, ոչ թէ չատ արգելօք չեն ունենար միմեանց հետ այն առնչութիւնները, որոնց մէջ այսօր կդեգերուին մեր դրացի թուրքերը, կամ ուրիշ խօսքով ասելով, նոքա արգելօք որքան զանազանութիւն կունենան Մահմետական լծակիցներից։ Անհաւատալի ինձ կթուի, թէ այդ պսակներով ամուսնացող զուգակիցների երջանկութեան թեզը կարճ կլինի մէյտ. նոքա իրանց երկուսասարութեան օրերը անցուցանելէն յետ, եթէ բաժանումն ալ առաջ եկած չլինի, ծերութեան մէջ չատ և չատ անգամ դժբաղդ կլինին Սակայն որչափ բազալի է տեսնել զուգամեալ Հային, իր ծեր կողակցի հետ միմեանց պահելով և պաշտպանելով ապրիլը և ւի մի ապագայ յոյսով երջանկութեամբ հանգիստ ու անդորր օրեր անցուցանել, մանաւանդ եթէ այդ կեանը պատկուած լինի լաւ ժամանգներովք Հայը արդի դարին մէջ այնքան ապահով ու իրաղազ կլինի անչուշտ, օրքան ինքը իր կենաց բոլոր պարագաներն հմտական կէտերը նախնեացմէ չնեռացնել և հեռի կմնայ առանց խիստ ընտրութեան օտարներէ ազդուելու հետամուտ լինելուց։ Չենց իրանք քաղաքական պսակ և բաժանումն կարելի լինող ամուսնութեան ցանկացող անձինքը եթէ լաւ խորհին և խոհան, մի փոքր եսասիրութիւնը, օդերին մէջ ամուրներ չինելու երեւակայութիւնը, գոռոզութիւնը, յամառութիւնը և այլ այսպիսի կէտերն դէն դնելով կհամոզուին անչուշտ, որ իրանց կարծիքը սխալ և մեզ չատ և չատ վնասակար է։

Արդ մեր մէջ այս տեսակ նոր հարցեր չատ է գալիքներ և կգալիքի, որոնց վերայ է հարկէ բնաւ զարմանալ հարկ չէ,

վան զի դա բնական է. ապագային չարժանայ ընթացքին մէջ յարաժամ այգպէս պատահած է և կպատահի։ Ընթերցող և մտածող հասարակութեան բազում անգամ է հանդիպիլ լսել և վերծանել թէ այս ինչ բանը հին է, Հոսկական է, պէտք է մի լուսաւոր ազգի օրինակին հետևել, այն ինչ բանը վաղեմի է, Ասիական է, հարկ է Եւրոպական կերպով առաջ վարել և այլն։ Բնականաբար այսպիսի դէպքերին երկու չերմ կուսակիցներէն երեցած է և կերևայ, որոնց մէկը պնդած է յամառութեամբ թէ ‘‘Որ ելանէ ի ցանկոյ հայրենեաց, խածանէ զնա օձն անապատի,,։ Իսկ երկրորդ մասը կամ կուսակիցները զգմտիդերը ձիծաղելով իւրեանց հակառակորդաց վերայ, հաւատացած են կամակրութեամբ թէ միայն ինքեանք են ճշմարիտ և իրաւացի։ Սակայն ես իմ կողմէն երկու մասին վերայ ևս մի այլ կնայիմ, զատ որում երկու կողմն ալ իւրեանց իրաւախտութիւն և ապօրինաւորութիւն ունին, ճշմարտութիւնը և սխալն, վնասն ու օգուտը կրնան տալ ազգին, և վերջապէս արդարութիւն ու անարդարադատութիւն ունին։ Բայց աստ հարկ չէ մտածման տալ որ երկրորդ կուսակցութիւնը առաւել բնական չափին մերձ է, քան թէ առաջինը, վասն զի աշխարհի բերմունքը, և բնական ճանապարհը կպահանջէ և կտիպել ժամ առնել ժամանակին հետևողել քան թէ նախնեաց։ Բայց ժամանակի հետ չարժեն ալ խորին գաղափարեան կկարօտին։ Ես բոլորովին այն անձանց թուէն եմ, որոնք կհաւատան և տեղեակ են որ ինչպես մարդը մարդէն կլուսաւորուի, այնպես և ազգը ազգէն։ Սակայն և նոքա ամենայն իրաւատութեամբ այդ կէտին վերաբերմամբ կպահանջեն խիստ հետատեսութիւն, մեծ խոհեմութիւն, վեմ խոհականութիւն, կատարեալ չրջանկատոդութիւն, և այլ ամենայն իմաստութիւն։ Որպէս զի ազգութեան չինութեան վերայ մի քար աւելացնելու փոխարէն, եղածն ալ չտապալին։ Որչափ անհրաժեշտ է, ազգի մը մի այլ ազգէն սովորութիւն կարդ կանոն և այլ ինչ և իցէ մի փոխ առնելը, նոյնչափ և հարիւրապատիկ առաւել այդ կէտը կարօտ է զգաստութեան և արթնութեան։

Այսօր Հայ գիւղացին ինչպես իւր ամեն պարագաների մէջ, այնպէս և ամուսնական կենաց վերաբերմամբ եթէ արտաքին կղմէն քիչ թէ չատ իւրեան չրջապատած հանդամանքներին հետամուտ է, գոնէ ներքին նկատմամբ ըստ մեծի մասին իւր նախնեաց ուղիով կընթանայ։ Ուստի և այս իսկ պատճառաւ չնայելով իւր կենաց չատ կողմերը, գրեթէ թիչատութեանց մէջ կլողայ. այնու ամենայնիւ դարձեալ մենք կարող ենք նորա վերայ երջանկութեան յոյսեր նչմարել։ Սակայն քաղաքականակ Հայի խիստ մեծ բաժինը ինչպես ուրիշ կէտերի, այնպէս և ամուսնական օրինաց դիտմամբ չատ հետացած է իւր նախնեաց ուղիէն։ Նա գրեթէ բոլորովին յանձնած է իրան օտարներէ սովորութեանց, բարուց, վարուց և այլ կէտերին։ Նա մի՛ այն կպակուի Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ, Հայ քահանայի ձեռօք. և՝այլ ոչինչ։ Օսմանեան՝ մի առակ կասէ թէ ‘‘Ոտգր ըստ մահճիդ երկարացրու,,. քաղաքացնակ Հայի մեծ մասը չատ բաներէն նկատմամբ հակառակ այս մտաց կարծիս։ Ուստի նայեցէք և քննեցէք ահա ոտքր դուրսն է մնացել։ Գիտեմք այժմ քաղաքներուն որչափ դժուար է աղջիկ և տղայ ամուսնացնելը, որ ատոհանի ծանրացած է այդ կէտը, քանի հասակն առած և ծերացած անձինք կան երկու տեղէն առանց պակուելու։ Այս հանգամանաց մասին կան անձինք, որոնք բոլորովին մերգը չամուսնացելոց վերայ կնհառեն։ Սակայն աղկ խոկալիս կնայես որ այդպես չէ։ Նոքա ըստ մեծի մասին ժամանակի բերմանց կհոնարհին գան թէ ուրիշ մի պարագայի Ով որ լաւ ձևով հասու եղած է, որդի ազգուստի դժուարացնալուն և ծանրանալուն, ընդհանուր առմամբ Հայի նիւթական վիճակի անապահով և խախուտ դրութիւնը, բարոյական և մանաւանդ մտացական կենաց ստորութիւնը, մեզ չրջապատած քաղաքականութեանց առ մեզ ունեցած յարաբերութեանցը, ով որ գիտէ և ականատես եղած է քաղաքներուն հարսանեաց արտաքին զեղխ ու չռայլ ձևերուն, ի զուր եղած փառատոր հանդիսներուն և ծախսերուն, խիստ պերճութեամբ և միայն սովորութեանց յետ չմնալու մասին տուած չքեղ կոչունքներուն, հարսն ու փեսան մեծաշուք զարդարելու համար վատնուած տասկներուն, նորանց տոքից ցգլուխ պատուհէրին մտոք ըստատած փողերուն, կհաւատայ անշուշտ մեր տատին և կհամոզուի մեր մտքին։

Արդ այդ արդելքներից չատերի ուղղելը գէթ մեր արդի դրութեան նկատմամբ ասելով մեր կարողութիւններից բարձր է, հետևապէս նորանց կարգաւորելը մեր կամաց ենթադրուած չէ. իսկ չատերն ալ մեզնից միայն կողմնակի կախուած ունին։ Բայց հարսանեաց արտաքին ձևերի մասին ուղղակի ծախսերի կարճացնելը լիովին մեր կամացն է տարբերած։ Ուստի այս առիթով գուցե գանուին անձինք, որոնք մեզ պատասխանեն թէ ‘‘Ըվ է ժողովրդին հարկադրողը կամ դէպի յայդ մղողը, թող չատնեն,,. Արդարև ոչ կրօնական և ոչ քաղաքական օրինաց կողմէն ուղղակի ժողովրդեան դէպի յայդ մղող կայ։ Սակայն մեզ պատղ և պատրող պատճառները կամ լաւ է ասել մեքենաները իշխանութեանցմէ առաւել կգտնուին և կձգեն ժողովրդին դէպի այդ ազգակործան չարժումը և յօժարուել, որին ինքն ալ երբեմն ազիտութեամբ երբեմն ալ այլ առիթներով կհետևի, չնայելով որ անձերի ձեռվ ապատ էր ընթանալ կամ չընթանալ դէպի այն։

Այս վախտագը կրկին սովորական ու բնական է. ամենայն ժամանակ ժողովուրդ ասած բանդ մեծամեծ և ահռելի ձախորդութիւն և չարիք կրած է այն ձեռնարկութիւններէն, զորս ինքը բոլորովին իրաւունք ունէր առնելու կամ չառնելու։ Սակայն ապօրինաւորութիւնները ազգերին մէջ դարերն են մուծած. ըսել է թէ դարերն ալ հպիւ կարեն հանուլ Դարերը դարուց ի դարս կիսխոսուն եթէ ապաթախտաբար ազգայ կամ ժողովրդոյ հոգեպար և մարմնաւոր սիտերը խորին ուշադրութիւն չդարձնեն իրանց ժողովրդոյ մէջէն ապօրինաւորութեանց բարձման վերայ։

Այսօր տես մեր ամուսնական կենաց սարսափելի և խառնուածիքար կողմերը, սոսկալի պարագաները կարթափեցնեն Հայ տղին իր կենաց յարմար ժամանակին ժամել յամուսնութիւն, յետ կկասեցնեն նրան այդ խորհրդէն, արդելք և խոչդոտ կը լինին Հայ ազկան իր կատարեալ հասակն մտնելէն յետ իրա երջանկութեան համար մի կենակից և ընկեր ձեռք բերելու։ Հայ պատանին կիսոնարհի այս պարագաների առաջ, նա կասկածի գլուխը քարե քար տալ, երկար ժամանակ պանդխտութեան մէջ թափառել. որպես զի եթէ աշխարհի դէպքերը և բերմունքները իրան չսղողեն, պատևւի։ Սակայն երբ որ արդեն իր տարիքը երեսունից քառասունի կհասնի։ Թող այդպես լինի. Թող խոնարհի նա իր ճակատագրի առաջ։ Սակայն ցաւալին այս է որ նա նորին կցանկայ տասն չորս կամ տասն հինգ տարեկան աղջկան մը հետ պսակուիլ, որպ տէրն ալ առաւել տակին գան թէ ուրիշ կարերին նայելով կհամաձայնի տալ, տւանց հասկանալու թէ այդպիսի ամուսնութեանց բաղմանալը որչափ տպօրինաւորութեանց առիթ կդառնայ։ Հայ աղջկայ իւր փեսի հետ ունեցած յարաբերութեանց մաքրութիւնը, սրբութիւնը և այլ վեհութիւնները, ինչպես վերևն ալ ըստ մեր կարողութեան քիչ թէ չատ ցոյց տուեցինք,, հին դարերէն ի վեր կայ և մեզ հասած է։ Սակայն այդ տեսակ ամուսնութիւնը կարող է կամաց կամաց ատրել և խանգարել այս ծայրագոյն բարոյականին. վասն զի տասն չորս կամ տասն հինգ տարեկան աղջիկ մը քառասուն տարեկան մարդու մը հետ պսակուելէն վերջը, բնականաբար առաւել քան տարեկան տղի մը սիրելու հետամուտ կլինի քան թէ իւր քառասուն տարեկան փեսին։ Այսպիսի պսակներէն աւելի աղջիկ զաւակներ կարատրուելին քան թէ տղերք. վասն զի այս կէտին մեզ չատ անգամ աղջկայ ուժը և բոլոր կարողութիւնները կգերազանցեն իր մարդէն։ Ի վերջոյ այս տեսակ պսակներէն աւելի հիւանդ զաւակներ կսերունին քան թէ կարգին կանիներ։ Ուստի այս փոքրիկ նկատմանիքներով սա կկամենանք ասել թէ. այդ տեսակ ամուսնութիւնքը իրանց անձին և մանաւանդ հասարակութեան առաւել վնասակար են քան թէ օգտակար։

Արդ ով պիտի ըլլայ մեր այս ցաւերուն դարման և ճար անողը. ով պիտի ըլլայ ընութեան այս վսեմագոյն օրինաց մէջ մեզ առաջ վարողը։ Ցեներեն իր դարի ծաղկիը, թագաւորացմէ ամուսնութեան հեչացնելը կպահանջէ։ Սակայն մեր արդի սկզբան յօդուածնուս ճակատը դնելուս միտքը աւելի ամուսնական օրինաց սրբազնութիւնը բացայայտ կացուցանելու համար էր քան թէ մի ուրիշ բանի։ Այդ մտոք թող առաւել հրճուին քաղաքականութեան ունեցող ազգերը. մենք դորանմէ չահ չունենք. մենք ժողովուրդ ենք։ Այս տեղ կրկին մեզ մեր ենկեղեցւոյ նուիրապետական դասը պիտի նպաստ. Լ.ՄԻՍԱԾԵԱՆ

Սրբազան Գահը օգնութեան ձեռքը պիտի կարկառէ, Լուսաւորչայ պաշտելի Աթոռը սատար և նեցուկ պիտի լինի, անելով հարկ եղած անօրէնութիւնները և դիւրացնելով ամեանութեան արտաքին բոլոր ձևերը, կուզեմ ասել աւելորդ ծախսերը։ Ատ հարկ է չմոռանալ թէ այս կէտի նկատմամբ մեզ քիչ օգուտ առաջ չեն բերեր, Հայ հասարակութեան մէջ նշանակութիւն և ազդեցութիւն ունեցող մարդի և կոչումի անձինք, երբ հաճին օրինակ լինել թէ ամեանութեան և թէ ուրիշ կէտերի համար սահմանուած աւելորդ ծախսերի բարձման, որոնք ըստ մեծի մասին և քիչ բացառութեամբ դժբախտաբար չռայլութեանց և զեղխութեանց գազափար տուողներն են։

Յակոբ Վ. Պէրպէրեանց.

ՕՐԻՈՐԴԱՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑ ԵՐԿԱՑՆԱԲԱԶՈՒԿ ԱՐՂՈՒԹԵԱՆՑ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՑ։

Լամբագրո–Ընեան Էջուրաբ ամեագրոյ.

Ամեոյս քսանին բազդի հրաւիրմամբ պատահելով Աղէքսանդրապօլը լսեցի զանգակներէ քաղցր ձայները՝ որոնք որ հրամայուէին քաղաքի ազգայնոց երկու սեռին էլ մեծից մինչև փոքրը դիմել Նորակառոյց Սուրբ Նշան եկեղեցին, որոնց հետ ի միասին հարկը ինձ էլ տարաւեց գնալ, բայց ամենքն էլ առհասարակ ոգեւորուած էին մի նորանշան աշխուժով, մեծի և փոքրի երեսին անպատ ուրախութեան ժպիտներ էին փայլում, մէկ կողմից էլ «մերձ է գարուն», ասեմօղ օրը պատասխանումեր նոցա իւր բարեխառն հայացքով, և այսպէս իւրաքանչիւր կողմից զուարճալի տեսարաններ կազմելով՝ կարծես արարչագործութեան ամենափառաւոր օրերից մինը լինէր, ուշադրութիւնս գրաւեց իւր վերայ ցայն աստիճան, որ առանց դանդաղելոյ շտապաւ մտեցայ բարեկամիս մէկին իմանալու այս տարապայման ուրախութեան պատճառը, և ահա անդէն պատասխանին, չես գիտեր Օրիորդաց գպրոցի առաջին տարեդարձի հանդէսը կը կատարեն»։ Ով մեծի բարերաղդութեանս, ուրեմն աճապարեմ մտանել Եկեղեցին, յորում դեռ նոր պէտք է սկսուէր սուրբ պատարագը. խուռն բազմութիւնը ընդմիջեցաւ, մտաւ Եկեղեցին Ճաջորդը Հայր Սուրբը, յետոյ աշակերտուհիքը զոյգ զոյգ պատկառելի իմն շարժմամբ պատուելի ուսուցչաց և պարկեշտասուն ուսուցչուհւոյ առաջնորդութեամբ կարգով կանգնեցան Հատեան դրպիրներու տեղակ երգելու, և սկսաւ սուրբ պատարագը։ Պատարագիչն էր նոյն ինքն Ճաջորդը՝ Աղաթփիրեանց բարեշնորհ Հայրը, որ հրաւիրանք Հոգաբարձութեան աւանձին իմն փառաւորութիւն էր տուել հանդիսին, մանաւանդ թէ որովհետև առաջին անգամն էր որ կ'տեսնէին Աղէքսանդրապօլու ժամասէր Ազգայինք օրիորդները սուրբ պատարագին գպրութիւն անելը, ուստի ջերմեռանդութեամբ մեր առած ամենքն էլ կ'դիմէին. և իրաւ շատ գեղեցիկ և տրտաշարժ կերգէին իւրեանց մատաղ հասակին և իգական սեռի ներդաշնակ ձայներուն համապատշաճ, էլ ո՞ր ապառաժ սիրտ կարող էր անդէն լուել իւր ջերմ արտասուաց կաթիլները մինչդեռ հրեշտակական ներդաշնակութեամբ կը լսէին սրբազան երգոց անուշութիւնքը, որոնք մերթ ուրախութեան և մերթ տխրութեան զանազան զգացմունքներ էին պարզեւում ծովացեալ բազմութեան սրտերին։

Պատիւ եմ համարում աստանօր չերեվոյել լռութեան նա և Նորին բարեշնորհ Հայրութեան սուրբ Պատարագի վերջում արած ազդու ատենաբանութիւնը, որի բովանդակութիւն էր հրաւիրել ժողովրդոց բազմութեան ուշադրութիւնը դէպի իւրեանց բարերարին երկայնաբազուկ Արդութեանց հանդուցեալ Ղահրաման իշխանի անմահ մեծագործութիւնը և տալ ճանաչել նորա մեծակըշիռ երախտեաց հաւաստիքը Աղէքսանդրապօլու ազգայնոց վերաբերութեամբ, որ նա ինքն բարերար իշխանը հաճել էր իւր Աստուածահաճոյ նուիրանաց զոհաբերութեամբ, բաց ի նպաստելոյ վեց հազար րուբլեաւ շինութեան նոյն Սուրբ Նշան եկեղեցւոյն՝ տալ հիմնել Աղէքսանդրապօլում սոյն Օրիորդաց գպրոցը տեղւոյն հասարակութեան ներկայ և ապագայ սերնդոց կեանքը բարւոքելու համար, մտաւորական և բարոյական յառաջադիմութեանց նկատմամբ, նմանեցնումէր սուրբ Հայրը այդ անմահ բարերարին իւր մեծագործութեամբ իբրև գանձի ծածկողյ յաղարակի, գեղեցիկ բացատրութեամբ և խմաստալից խօսքերով հաւաստիացնումեր թէ արդարև երջանկայիշատակ հանգուցեալը իւր առաքինական և ազգասիրական ըղձագմունքը իբրև պատուական գանձ ի վաղուց հետէ ծածկած ունենալով իւր ազգակնամ սրտի մէջ՝ ահաւասիկ հանեալ զայն կբաշխէ Ազգային ուսումնակարօտ մանկտուհեաց, որով կապացուցանէ իւր արժանաւոր ժառանգ լինելը այն արժանայիշատակ քաջազօր իշխանաց երկայնաբազուկ Արդութեանց Տոհմին, որոնց սիրալի մեծագործութեանց երախտալից արձագանքը շատ դարերու ողջունածէ և դեռ կողջունէ. ի վերջոյ մաղթելով յերկնից հոգւոյ փրկութիւն հանգուցեալ բարերար իշխանի և համայնից հանգուցելոց քաջահռչակ Տոհմին Արղութեանց, բարերարուհի տղնուափայլ Տիկնոջ նորա և պատուելի կտակակատարաց բարերութեան շատ օրեր, և օգոստափառ ինքնակալ Կայսեր կենաց երկարութիւն, որոյ հզօր հովանաւորութեան ներքոյ կամք բարեպէս և կվայելեմք անդորրութեան դիւրակաւ ոչ սակաւ ազատութեան առանձնաշնորհութիւն ի մտաւորական զարգացումն, կնքեաց ատենաբանութիւնը և վեր եկաւ Սեղանից Սուրբ Հայրիկը «Որ օրհնեա զանասիկս» ասելով. և սկսեցին միաբանութեամբ եկեղեցական ուխտի կատարել հոգեհանգիստ պատշաճաւոր մաղթանքներով յանուն հանգուցեալ բարերարի

Արդուքեանց, և զայն ևս աւարտելուց յետոյ գալով եկեղեցիէն դիմեցին Հանդիսականաց բազմութեամբ Օրիորդաց դպրոցը, ուրանօր պատրաստեալ կար սեղանը զանազան խորտիկներով, և յառաջագոյն հրաւիրուած էին Հոգաբարձուաց առանձին հրաւիրագրերով յամենայն կարգից երևելի անձինք, բարեգործ և բարեգործուհի անդամք, պատգամաւորք հասարակութեան կողմից, ուսուցիչք և ուրիշ պաշտօնական և պատուելի քաղաքացի պարոններ զանազան ազգաց, ամենքն բոլորելով սեղանը նախագահութեամբ բարեշնորհ Հօր իւրեանց՝ ուշադրութիւնը գարձրած էին մատաղներամ աշակերտուհեաց վերայ, որոնք կանգնած էին սեղանի հանդէպը ընդմիջելով բարեգործուհեաց խումբը շրջապատող հանդիսականներէն, ամենքի ձեռը վառած մոմեղէններով յոյժ պատկառելի կերպով կանգնած միատեղ՝ ամեն մէկ աշակերտուհւոյ երեսին առանձին առանձին շնորհաց նշոյլներ կը փայլէին. առաջ երգեցին մի քաղցր երգ, երգը ընդմիջելով կարդաց Ճառը ի դիմաց բոլոր աշակերտուհեաց Օրիորդ Զարղալամ Սէյլանեանցը. յետոյ երգեցին մի երգ ևս. նոյնպէս կարդաց մի Ճառ պարկեշտափայլ ուսուցչուհի միանդամայն և վերակացուհի Օրիորդաց Դպրոցին Տիկին Զարուհի Դիլսուզեանցը, նրանից յետոյ Պ. Ղազար Աղայեանցը կարդաց ուշադրութեան արժանի մի կարի ազդու Ճառ, յետոյ Համառօտ հաշուեցուցակը տարեկան մուից և ծախուց Դպրոցին, հուսկ ապա մի քանի ազգային սրտաշարժ երգեր ևս երգեցին Օրիորդները. Սուրբ Հայրը օրհնելով զսեղան և բոլոր Հանդիսականները՝ սկսեցին սեղանը վայելելու, սեղանի վերայ ոչ սակաւ բաժակներ դարտակուեցան կեցցէներ բարձրացնելով իւրաքանչիւր բաժակի առաջարկութեան վայրկենում՝ ամենաջերմեռանդ հոգւով հայցում էին յերկնից երկար կեանք Հանդերձ բարօրութեամբ շատ օրերով Օգոստափառ Սայսեր կենաց և իւր ծիրանածին գահաժառանգներու և Մովկաեան փոխարքայի Թագաւոր և մեծ իշխանի կենաց, մանաւանդ Ազգապետիս մեր Վեհափառ Հայրապետին Թանգակին կենաց, որ իւր ուսումնասէր պաշտելի յատկութեամբ անմոռաց ունի ի սրտի զպրոցս Օրիորդական՝ որպէս և բոլոր ուսումնասէր Հայոց, խնամելով իւր ազգասէր հովանաւորութեան դրօշակաւ, նաև վասն փրկութեան հոգւոյ այն անմահ բարերար իշխանի երկայնաբազուկ Արդութեանց և աւնուաւիայ կենաց իւր կտակակատար բարեպաշտից և բարեպաշտուհւոյն։ Դպրոցիս եղած ընծայաբերութիւնը՝ ի զանազան անձանց կ'հասանէր մօտ հարիւր րուբլի արծաթ։

Վերոյհիշեալ Ճառը և համառօտ հաշուեցուցակը նամակիս հետ նուաստաբար առաքելով . . . . . խմբագրութեանդ՝ պատիւ ունիմ խնդրել հիւրընկալելու հաճոյքը պատուական ամսագրոյդ իւր հոյակապ թերթերում Ճառերու հետ ի միասին, և իմ յետագայ ղեցմունքս հաղորդել իմ սիրելի հայրենակիցներուն յուրախութիւն և ի բերկրանս ուսումնասէր սրտից. երջանիկ օրուանս թանկագին ժամերում արտայայտեալ փրկանքում տպաւորել էր մեզ մէջ երկու զգացումներ միմեանց հակառակ, ահա թէ ի՞նչ են նոքա, մինը փառաւոր Հանդիսի վայելչապէս կատարումը յանուն առաջին տարեդարձի սկզբնաւորութեան յիշեալ Դպրոցին Օրիորդաց, որոյ վայելման արժանացած լինելով բաղդի բերմամբ՝ փոքր ի շատէ ծանօթացայ ներկային, և հաւաստի եմ թէ՝ որովհետև Դպրոցը ունեցել է իւր պատշաճաւոր ընթացքը շնորհիւ արիաքան ուսուցչաց և պատուելի Հոգաբարձուաց, և արդէն ցոյց է տալում համապատասխան լինելը իւր անմահ բարերարի սուրբ նպատակին. իսկ ապագայի համար, իմ տկար երևակայութեանս միջում՝ ինչպես թանձր մթութեան հետ մի աղօտալի լուսոյ փայլուն որպէս թէ կոյր ճակատը լոյս տալոյ լինի՝ գուշակվում էի լուսաւոր և շատ օգտաւէտ գաղափարներու գարուն, որը անտարակոյս պիտի պտղաբերէ իւր ժամանակին՝ ուսման կենդանի տաճարներ խեղճ Հայկազունեաց կատարեալ մարդիկ նուիրող արժանաւոր մայրեր, որոնք իբրև զօրեղ ձեռքեր թերևս կարող կ'լինին սրբել տառապեալ ազգիս արտասուքը, ջնջել դժբաղդ Հայաստանի սգաւոր հոգւոյ վերայէն այն անողոքելի սեւ ճակատագիրը, և փարատել նորա բազմադարեան վշտերը. գառնալով միւս զգացմանս վերայ՝ ահ սարսափումեմ յիշել այդ գեղեցիկ սեռի ըստ մեծի մասին մինչև ցարդ սեպհականեալ այն ողբրմելի վիճակը, այն սարսափելի տխուր կերպարանքը, որոնք թէպէտ իբրև մարդ գիւղ՝ քաղաք բնակելով բոլորովին անտարբեր վայրենիներ, անծանօթ է մնացել իւրեանց մուտ գաղափարները իբրև մի յերկնային էակէ, այն չքնաղ անդորրութիւնից և աշխարհաշէն խաղաղութիւնից անգամ չճանաչելով իսպառ թէ ի՞նչ նշանակութիւն ունի մեր ընտանեկան կեանքի վերան խաղաղ և անդորր նիստ ու կացը, թող միւս այլ մեր կենաց վերաբերեալ կարևոր սկզբունքները, բարոյականութեան, Աստուածպաշտութեան, տնտեսական կառավարութեան ևլն ևլն. այդօրինակ մեռեալ արգանտից ո՞ր կենաց յոյսը ծնանելու ակնկալիք կը մնայ մեզ, որը յայտնի բաց է արել մեր յառջև մահու գերեզման. սոցա դժոխային ստուերով ներկած կերպարանքը մանրամասնաբար նկարագրելը առժամս հարկ չ'կար, կ'թողնենք ուրեմն նրանց՝ որոնք աւելի յարաբերութիւն ունին մեր ժողովրդական կեանքի հետ, այլ այսու ամենայնիւ մեր զգացումները միմեանց հետ բաղդատելով՝ յայտնի խոստովանվումեմ իմ տկարութիւնս՝ որ չեմ կարող չափել այն բարերար իշխանի անմահ մեծագործութեան արժէքը՝ որն որ ահաւասիկ իւր բարձրը նշանակութեամբ բարդել է Աղէքսանդրապոլու ազգայնոց վերայ մեծ երախտիք, և կ'ղոչմէ նոցա

ներկայ և ապագայ սերնդոց սրտերու մէջ անջնջելի Երկայնաբազուկ Արդուլհամիտ քաջազօր տոհմի անմահ և բարերար անունը. փառք ուրեմն այն բարերարի հեռատես ոսկերաց՝ որոնք արդարև իբրև պատուական գանձ յագարակի աշխարհիս ծածկեցան, և Հանդիստ ի Հանդերձելումն իւր ազգասիրեամ Հոգւոյն, և պատիւ նորա աղնուափայլ ընտանեաց Հանդերձ բազմօրեայ բարեբախտ կենօք։ Ա՞խ, Հազար երանի կլինէր մեր ապագայ սերնդոց՝ եթէ այսպիսի բարերարաց Թիւը օր ըստ օրէ աւելանայր։ Վերջ տալով խօսքերիս կ'ժամխթեմ Դպրոցին Օրիորդաց յառաջադիմութեան զարգացումն, պատուելի Հոգաբարձուաց և ուսուցչաց և ուսուցչուհւոյն կարողութիւն և աչալուրջ հսկողութիւն, որպէս զի առաւել բարեկարգութեամբ կարողանայ լրացուցանել և երկրորդ տարեգարձի շրջանը և շարունակարար աւելի ևս (*)։

Ա՛ելէքսէքէ Վահանայ Ա՛ռնո-կեան.

է 24 ն ֆեորվարի 1872 ամ.

Ժամադօպ Հաղո-եօղլաք

առաջին չրջանի Օրիորդական Հոգևոր Դպրոցի տեղեկ քացնելոյ կոպակառնդութեամբ երջանկահռչակ Ղահրաման իշխանի երկայնաբազուկ Արդո-ւթեանց, որ կազմեցաւ է Հոգաբարձո-ւթենէ նոյն Դպրոցի յառաջ հանդիսի տարեդարձի։

Ա. Հոգաբարձո-ւթեան տան

Նախագահ Հոգաբարձութեան Դպրոցի՝ Փոխանորդ Թեմին Հայոց Աղէքսանդրապօլոյ.

Հորս Հոգաբարձուք.

Երկու կանդիտատք, յորոց միոյն ի պատճառս տեղափոխութեան միոյ յանդամից Հոգաբարձութեան՝ եմուտ ի պաշտօն Հոգաբարձուի.

Քառասուն պատգամաւորք.

Երեսուն եօթն բարեգործուհի անդամք.

Բ. Ո-սո-ճական տան.

Ո-սո-ցչէ անո-ճիչ.

Կրօնուսոյցն.

(*) Մոռացայ յիշել որ ինչպէս տեղեկացայ յարգելի Հոգաբարձուներից, դպրոցի տարեդարձի միւս շրջանները էլ այսու հետեւ չպէտք է կատարուին մի եւ նոյն օրը այսինքն փետրվար ամսոյ մէջ, այլ պէտք է կատարուին յառաջիկայ տարիներում ի ժամ հարցաքննութեան ըստ կանոնաւորեալ ուսումնարանաց կանոնին։

Ո-ճի-ո-ոբ.

	Ռ.
Ուսուցիչ Հայոց և Թուրքաց լեզուի տարեկան	600
Ուսուցիչ Հայոց լեզուի և երաժշտութեան	180
Ուսուցչուհի նոյն և վերակացուհի. .	120
Ծառայ դպրոցի	40

Ընկերո-հի+ յօրէ քայման դպրոցի.

Շրիավարժ որդեգրուհիք Ղահրաման իշխանի Երկայնաբազուկ Արդուլհամիտ	12
Թոշակառու որդեգրուհիք բարեպաշտօն անձանց քաղաքիս	9
Թոշակառու աշակերտուհիք . . .	40
Ծանօթ. Ի թոշակառու որդեգրուհեաց բարեպաշտօն անձանց չորսն և աշակերտուհեաց երկուսն ելեալ են ի Դպրոցէս ընթացս վերջին տրեմի.	6

Ցընծայո վերջին պրեմի մտեալ են.

Երկու թոշակառու որդեգրուհիք բարեպաշտօն անձանց	2
Աշակերտուհի թոշակառու	1

Ի սկզբան ներկայ ամսոյս մտեալներ.

Աշակերտուհիք թոշակառուք. . . .	3

Ա-ուրկայ ո-աման.

1) Կրօնագիտութիւն.
2) Հայոց լեզու.
3) Թուրքաց լեզու.
4) Թուաբանութիւն.
5) Աշխարհագրութիւն.
6) Բնական պատմութիւն.
7) Գեղագրութիւն.
8) Երաժշտութիւն.
9) Ձեռագործութիւն.
10) Նկարչութիւն.

Գ. Ղէ-ղահան տան.

	Ռ.
Ամենատեսակ մուրք մինչ յառաջին օրն ներկայ ամսոյս Մայր գումար ստացեալ ի հաշիւ կտակաւանդութեան արժանայիշատակ Ղահրաման Իշխանի Երկայնաբազուկ Արդուլհամեան, որք են տոմսակք Արքունի դրամանոցի գումարաւ	26000
Ի բարեկան կտակակատարաց Հանդուցելոյն նուիրեցաւ իբրև առանձին նպաստ քացման դպրոցին.	500
Յարքունի գանձարանէ ստացեալ տոկոսադրամք կտակեալ տոմսակաց ար-	

	Ռ.	Կ.
քունի դրամանոցի ի 1-ն Նոյեմբերի 1870 ամի, ցմէկն Մայիսի 1872 ամի, ամենն	1950	
Ի յօժանդակութենէ բարեգործուհի անդամոց Օրիորդական դպրոցի . . .	170	
Իտարեկան Թոշակադրամոց աշակերտուհեաց ըստ որոշեալ կարգացն . .	1018	
Ցընծայարերութենէ ազնուամիծար ժողովոյ Հոգատարութեան վիրաւորելոց և հիւանդ զինուորականաց Աղէքսանդրապօլու բաժնի ընդ ձեռն Պօլկօվնիկ Խակովի	120	
Ի նուիրատուութենէ զանազան մեծատուն անձանց և այցելուաց Դպրոցին .	85	40
Ցարտաքին շահեցուցմանէ տոմսակաց արքունի դրամանոցի և այլ ուսումնարանական դրամոց	360	
Ի զին վաճառեալ ուսումնարանական գրեանց Լայլն	33	82
Գումար . .	30237	32

Ընդհանրական ծախս.

Ի վարձ պատրաստեալ ձեւակերպութեան և յատակագծի վասն նախամատրեալ շինութեան Օրիորդական Դպրոցի.	26	
Ի վարձ բնակարանի վասն ուսումնարանի ի մէկէն Նոյեմբերի 1870 ամի ցըմէկն մարտի 1872 ամի	206	20
Ի ռոճիկ ուսուցչաց, ուսուցչուհւոյ և ծառայի դպրոցի	847	
Ի զին վառելափայտի վասն դասատանց դպրոցի	76	55
Ի զին դասական գրեանց վասն որդեգրուհեաց և միւս աշակերտուհեաց . .	42	84
Ի պէտս հանդերձեղինաց, կոշկաց և այլ ուսումնական պիտոյից այս ինքն գրեանց, գրչաց, ձեռագործական նիւթեղինաց Լայլն երկոտասան որդեգրուհեաց Ղահրամանի իշխանի երկայնաբազուկ Արղութեանց	306	57
Ի պէտս կարկատանաց անցեալ ամին դպրոցական տան, սենեկաց, դրանց, լուսամտից Լայլն, ամիսն	56	67
Ի պէտս հոգացման բացման օրիորդական Դպրոցի, ի հաստատութիւն հաւատարմագրաց, ի պատրաստութիւն կարեւոր պարագայից, գրասեղանաց, նստարանաց, գրատախտակաց, ուսուցչական գրասեղանաց, աթոռոց, արկղաց, գործեաց Լայլոց և ի պէտս դպրոցական մանր մնացապահանջ ծախուց	302	10
Գումարն	1863	94
Զայս գումար ի բաց բարձեալ ի մտից գումարէն՝ մնայ ի պատրաստի . . .	28273	35

	Ռ.	Կ.
Բարդկով ի վերայ դմնացեալն յապառիկս		
Ա. ի թօշակադրամոց անցեալ ամի	96	
Բ. ի բարեգործուհի անդամոց նոյնպէս	30	
Գ. ի վարձու կիսաբաժին ուսումնարանական տան մինչ ցմէկն Փետրվար ամսոյ	30	
Ամենն	28529	35
Ի մնացորդ քանակութենանց են դրամք այսպիսի.		
Ա. տոմսակք արքունի դրամանոցի, մայր դրամն	26000	
Բ. երկու մուրհակագիրք բարեյոյս անձանց քաղաքիս	1680	
Գ. պատրաստական դրամ . . .	693	35
Դ. ապառիկք	156	
Գումարն	28529	45

(Սպորադրոնիճեսի Նախաբանի և հռչակաբանութեան:)

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ.

Անցեալ թուոց մէյն մէջ թէհրանի Արևել. Հոգաբարձութենէ խրկուած գրութեամբ մեր սովալլուկ պարսկաստանաբնակ եղբարց ի նպաստ հաւաքեալ նուէրները հպատարակած էինք, յորում կյիշուէր Անգղիոյ հիւպատոսարանէն խրկուած 9000 դրան, որոյ համար հետևեալ բացատրութիւնը ընդունեցինք:

Մինչդեռ սոյն Ասպահանումն և նորա շրջակայ գիւղորէից մէջ ծնունդ կառնէր հեռաբնակաց երկմտութեան տակ, տեղւոյս Անգղիական Հիւպատոս Պ. Ճոնսն գրաւոր տեղեկութիւն ունեցաւ, զոր անմիջապէս հաղորդելով Ուսաց Հիւպատոսին՝ երկոքեան ևս շարժելով ի քրիստոնէական և ի մարդասիրական եռանդուն սիրոյ՝ խորհեցան ըզբարմաւոր օժանդակութեան ձեռքն կարկառել Ասպահանաբնակ սովալլուկ թշուառացն, վասն որոյ այս գովանի մտադրութիւնն ի կատար ածելոյ առ Թիւ կդիմէին առ Գերապատիւ Առաջնորդ տեղւոյս Գրիգոր Սրբեպիսկոպոսն, իւրեանց հետ ունելով վաճառականապետ Պ. Արղութեանն, և Պ. Աստուածատուր Ղարաբէկեանցն, որ թարգմանի պաշտօն կվարէր Գեր. Առաջնորդին և Անգղիական հիւպատոսին մէջ Անգղիական լեզուին. մի ըստ միոջէ Թէ սոյն և Թէ իւրեանց բազմաց սրտից լիաբերան շնորհակալութեանն արժանաւոր մտադրութիւնն կ՚յայտնեն. որոյ ազգասիրական ղեկմունքն արդարմանի և ուրախարար առարկաներով շփոթուեցաւ անմիջապէս. տրտմանի՝ զի իւր սիրելի ազգայինք՝ իբրև ճնճղուկ բազէի մանկիներուն որս կգտնէ կենսաղաւ սղութեան և սովու բռնութեանն. ուրախանի՝ զի ողորմութեան գիմոց ջերմ պաշտպանութիւնն ներկայ կտեսնէր. ուստի

պատասխանեց ,, միակ յոյս և զօրաւոր նեցուկք թշուառութեան նոցա, հաղուագիւտ բարերարք, Պարոնայդդ այդ աստուածահաճոյ մտադրութիւնն մարմնաւորապէս պսակելոյ անզօր լինելով, աղօթիւք կխնդրեմ արժանանալ ձեզ հոգևոր պատկացն. զի սորանով ոչ միայն պաշտպան և բարեբար կհանդիսանաք այնոցիկ ողորմելեացն, այլ և ըրութեան Աղբիս, որոնք քաջ ճանաչելով իւրեանց բարերարքն՝ իւրեանց անմոռաց երախտագիտութեանց հետ՝ որ Հայ ազգի բնաւորութեան գովելի յատկութեանց միոն է, իւրեանց սրտից հաստակրութիւնը և երախտապարտ զգացմունքն չի պիտի մոռացութեան և ապերախտութեան քօղոյ տակ ծածկել կարողանան ոչ առօրեայ փաղքը, ոչ մնոտի իշխանութիւնը, և ոչ այլ ինչ պատրանք, որոնց յայտնի փորձն առած են՝ որոնք մինչև ցայսօր սմանապիսի գթութեան ապահովութեան տակ պահպանած են Հայութեան անդամներէն, իսկ զիս ինքս բղօրովին երախտապարտ կկացուցանէք. քանզի ինձ պարտ էր խոնարհաբար ձեզանից խնդրել. բայց ձեր գթութիւնն և մարդասիրութիւնն կանխեցին,, . և յետ զանազան խօսակցութեան և սիրալիր ընդունելութեանց ըստ արդի քաղաքականութեանն, մեկնեցան։

Եւ համահաճ հաւանութեամբ երկուց Ռուսական և Անգղիական գեսպատոսացն ժողովարարութեան ցուցակ կազմելով՝ իւրեանց իսկ ջանասիրութեամբն հինգ հարիւր Պարսից թումանն կժողովեն ի Հայ և յայլ քրիստոնեայ վաճառականներից, զոր Անգղիական Հիւպատոսն փութապէս հեռագրութեամբ կհասուցանէ իւրեանց Թէհրանի Դեսպանատանն, որոյ միջնորդութեամբն Պ. Ս Պ. Աղանուրեանցն՝ որ է գործակատար Անգղիացւոց ի Ջուղայ՝ տեղոյն աղքատաց արկեղ Հոգաբարձութեանն կհասուցանէ թշուառացն գրամաքաշնել արգարութեան կշռով։

Ա՛յլ մի՛թէ զգայուն սիրտն պիտի նիրհէր անհոգութեան քնոմն. բաւական պիտի համարէր՝ ողորմելեացն բազմաթիւ քանականութեան համեմատութեամբ հինգ հարիւր թումանն, բնաւ ոչ. վասն որոյ մեր ազգասէր Գեր. Սրբազանն սովամատն ազգային թշուառացն կենաց փրկանքը բազմապատկելու հետաւոտութեամբ, ևս իւր վաւերացուցմամբ մին ցուցակ կազմելով վերոյիշեալ վաճառականապետին ազգասիրութեանն կյանձնէ, որ իւր ազգասէր և եղբայրական ջերմեռանդութենէ շարժելով՝ սիրով ընկալաւ, և նախ ինքն առատապէս ստորագրելով՝ դիմեց մերազնեայց ողորմութեանն, ուստի քանի ինչ աւուրց յետ 200 Պարսից թումանն կհասաքէ, զոր Նորին Սրբազնութեան և Ռուսաց Հիւպատոսին գիտութեամբ վերըստին յանձնվեց Անգղիական Հիւպատոսին, որ փութացաւ ըստ առաջնոյն ապահովապէս հասուցանել Հոգաբարձութեանն Արկեղ Ջուղայու աղքատաց։

Բայց դրամոց անվտանգ և ապահով հասնելուն տակ բացատրութեան արժանաւոր կէտ կայ, վասն զի ստացողք միայն ստացման տեղն գիտեն, բայց իւրեանց առատաձեռնողներն՝ ոչ, ապացոյց բանիս, ըստ որում յ30 Օգոս. անցելոյ Հոգաբարձութիւնն տեղեկագրելով սուլթ սահմանութենէ Գեր. Առաջնորդի. Արտպատականիս Հայոց, դրամատոր օժանդակութիւնն կխնդրէ այն սովալլուկ թշուառաց համար, իսկ Գեր. Առաջնորդն զանց չառնելով փութապէս մանրամասնաբար պատասխանագրութեամբ գործոց հանգամանքը տեղեկագրեց Հոգաբարձութեանն, այլ նոքա անփոյթ եղեն գործոց իրականութիւնն յերևան հանելոյ, քանզի բացի ձեր պատուական Արարատի մէջ, նաև Կ. Պոլսոյ Մասիսի մէջ հրատարակած են նոյնպէս, վասն որոյ պարտ անձին համարելով զճշդութիւն եղելութեանցս՝ բացատրութեանս հրատարակումն կխնդրեմ ի լուր ազգայնոց։

Նապատ Նապատեանց.

ի Դաւրէժ։

ՀԱՇԻՒ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻՆ ՂԶԼԱՐԱՑ ՀԱՑՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ. 1870—1871 Թ.

(Դ. Խաչէն Ահարոնեան)

ա. Աշակերտ . .	Հոգև.	Թոշ.	Ձրիավ.
Տարեկան ընթացքում ունեցել են . .	13	90	70
ընդ ամենը . . .			173
Սոցանից դուրս են եկել առանց աւարտելոյ ուսումն . . .	1	5	19
ընդ ամենը			25
Եւ ներկայումս ունինք	12	85	51
ընդ ամենը			148

բ. Դասատուներ և վարժապետք.

Ուսումնարանը ունի այժմ երեք դասատուն, և մի նախակրթական մասն, որոց մէջ ուսանում են յետագայ առարկաները, և ունի հինգ վարժապետք և մի վերակացու։

Պարապմունքն ուսանում են Հայոց լեզուից կարդալ և գրել, նոյնպէս և Ռուսաց լեզուից, ուսուցանում են երկու վարժապետք։

1. Դասատուն մէջ ուսանում են Կրօնից՝ սկզբնական գիտելիք հաւատոյ, Հայոց լեզուից՝ առաջին մասն Քերականութեան, և Թարգմանութիւն Աւետարանի, գրաբարից դէպ ի աշխարհաբար, Ռուսաց լեզուից՝ վարժ կարդալ և գրել, և կարգացածը պատմել, Թուաբանութիւնից՝ մինչև կոտո-

բակները, լուծումն թուաբանական խնդրոց, գրաւոր և բանաւոր եղանակներով, Ռուսաց և Հայոց վայելչագրութիւն։

2. Դասատուն ՝ի ուսանողս՝ ՚ի Կրօնից՝ Հին և Նոր Կտակարանի պատմութիւն, Հայոց լեզուից՝ Քերականութեան երկրորդ մասն մինչև վերջը, գրաւոր թարգմանութիւնք մասն յօդուածոց աշխարհաբարից դէպի գրաբառ լեզու, Ռուսաց լեզուից՝ Քերականութեան առաջին մասն, վարժ կարդալ և առանց սխալի գրել, և թարգմանութիւնք. Թուաբանութիւնից՝ մինչև յարաբերութիւնները (пронярціи)· Աշխարհագրութիւնից՝ ուսումնական և բնական մասն. Ընդհանուր պատմութիւնից՝ պատմութիւն հին դարուց, Ազգային պատմութիւն ընդարձակ դասախօսութեամբ։

Ցետ այս տարուայ քննութեան, երկրորդ դասատան առաջաւոր աշակերտքը պիտոյ է դուրս գային ուսումնարանից, բայց Հոգաբարձութիւնը չկամելով մի կողմից թերի և անկատար թողնել, նոցա մտահարուած գիտութիւնքը, և միւս կողմից՝ տեսանելով նոցա եռանդը և փափաքը դէպ ի օրքան կարելի է կատարեալ ուսումն, — սահմանեց բաց անել երրորդ դասարան, համաձայն կանոնադրութեան Ուսումնական մասնաժողովի որ է ի սուրբ Էջմիածին (Արարատ Օրարիր) և որ աւանդվում են յետագայ առարկաները։

Կրօնից՝ եկեղեցական պատմութիւն.

Հայոց լեզուից՝ պատմութիւն Հայոց գրականութեան, արձակ շարադրութիւնք գրաբառ և աշխարհաբառ լեզուաւ, թարգմանութիւնք Ռուսերէնից Հայերէն գրաբառ, և քաղուածք բոլոր Քերականութեան. Ռուսաց լեզուից. բոլոր Քերականութիւնը, թարգմանութիւն Հայոց լեզուից։ Թուաբանութիւնից՝ յարաբերութիւններից մինչև վերջը, և երկրաչափութեան սկզբունքը։ Աշխարհագրութիւնից՝ ընդարձակ դասախօսութիւն քաղաքական աշխարհագրութեան. Ընդհանուր պատմութիւնից՝ միջին և նոր պատմութիւն մինչև 1815 թուականը։

Բացի սոցանէ կազմուած է երկու խումբ եկեղեցական երգեցողութեան համար, և վարձուած է Տէր Գէորգ Իշխանեանց, քահանայից ջոկ, Ս. Ղորդանեանցը, որպէս ուսուցիչ, եկեղեցիներու համար ձայնաւոր երգիչներու խումբ պատրաստելու համար։

3. Դասախօսական յետնաբերնէ։

Կրօնի ա. Նախաշաւիղ կրօնագիտութեան Հ. Օրլեվիի, ա. և բ. մասն, ա. և բ. դասատանց համար։

բ. Եկեղեցական պատմութիւն Մանտինեանցի, երրորդ դասատան համար։

Հայոց լեզուի, ա. ընթերցարան Պ. Տէր Աղէքսանդրեանցի, և շարժական տառեր հնչական ձեւով ուսուցանելու պատրաստական դասատան համար,

բ. Աւետարան թարգմանութեան համար, և Քերականութեան առաջին մասն, Պ. Ս. Պալասանեանցի, ա. դասատան համար։

գ. Քերականութեան երրորդ մասն՝ Պալասանեանցի, և Մուրատեանի, երկրորդ դասատան համար։

դ. Պատմութիւն գրականութեան Պալասանեանցի, երրորդ դասատան համար։

Ռուսաց լեզուի, ա. «Родное слово» Ушинскаво 2 годъ. Подвижныч буквы позвуковой методѣ Столбянскаго, պատրաստական դասատան համար, բ, «Книга для чтенія» Водовогва առաջին դասատան համար. գ. «Нашъ другъ» Го Корфа. երկրորդ դասատան համար. դ. «Граммашика» Иванова երկրորդ և երրորդ դասատան համար. ե. Дѣтскій Міръ» Ушинскаго 2.й годъ երրորդ դասատան համար։

Աշխարհագրութիւն, կորնելիոսի թարգմանուած աշխարհագրութիւնը երկրորդ դասատան համար։ Իսկ երրորդ դասատան համար՝ Աշխարհագրութիւն Պալճեանի ի Մխիթարեան ուխտէն, և աշխարհագրութիւն Աբատովսկու։ Ընդհանուր Պատմութիւն, Հին դարուց պատմութիւն Սիմէոնեանցի, և ձեռագիր ձեռնարկով երկրորդ դասատան համար։

Միջին և նոր Դարու պատմութիւն պ. ուսուցչի ծաղկաքաղ զանազան Հեղինակներից երրորդ դասատան համար։

Հայոց պատմութիւն պ. Զերքեզեանի աշխատութիւնը երկրորդ դասատան համար։

Դասախօսութեան պատկանելիք. Աշխարհացոյց, երկրագունդ, երկրաչափութեան ձևեր, վայելչագրութեան օրինակներ, և այլ դասախօսութեան օգնական գործիքներ։ Թողումեմ այլ բազմատեսակ գիրերը, որոնք ազգասէր անձանց ընծայաբերութեամբ ձեռնհասութեան մեր ուսումնարանի հիմնադիր մատենադարանը, և որոնց մանրամասնաբար հաշիւը տեսաք իմ արդէն ընկերի տնտեսական հաշուոյ մէջ։

Այս տարի զինի տարեկան քննութիւններից, արժանացան փոխել դասատնները պատրաստականից դէպ ի Ա. դասատուն՝ մրցանակք 4 աշակերտք, և առանց մրցանակի 28 աշակերտք։ Առաջին դասատնից դէպ ի երկրորդ դասատուն փոխեցին մրցանակք 5 աշակերտք, առանց մրցանակի 8 աշակերտք։ Երկրորդ դասատնից դէպ ի Գ. մրցանակք 4 աշակերտք, իսկ առանց մրցանակի 3 աշակերտք։

Հոգաբարձու և Տեսուչ ընդ. Ընանեան
Ասլանեան — Հահ.
Հոգաբարձու և օգնական Տեսուչ
Եսայեան Պաճկաճեանց
Յովհաննէս Քոլոթեանց
Մխիթար Քալանթարեանց

ի 28 Նոյեմբ. 1871

ի Դպրոց։

ՍՈՎ Ի ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.

Ցիրաւի սովու սաստկութեան միամեայ շըրջանն բոլորելոյն կմերձենայ, որոյ մէջ մանուկս՝ երիտասարդս և ծերունիս շատ պղտհց իւր անգթութեանն, թէ ի Խորասան և թէ ի Արաղածոտն, բայց անյագ կենաց ոմերիմ՝ թշնամին՝ իւր անյագ դժոխականման որովայնին շատ ասելն՝ յանցանք համարելով՝ քայլափոխերն արագեց յԱսպահան և ի Թէհրան, որ թագաւորանիստ գողով՝ թէպետ սղութեան վերին աստիճանի հասուցանել զօրաւոր եղև, բայց բարեբախտաբար կենաց զոհագործութենէ զուրկ, բայց ոչ բոլորովին, քանզի նորա շրջակայ գիւղօրէից մէջ բաւականաչափ որսաց. և այս յանդուգն իւրեան ամօթ համարելով իբր երկրաչափ Պարսկաստան չչափելն, քանի ամսով յառաջ քաղաքիս մէջ դիմագրութեան անզօր անանկներն այցելելով՝ իւր դրօշակի տակ խոնարհեցրեց զգալի յաջողութեամբ, ուստի անցաւ երկրորդ աստիճանին, որոնք առժամանակ դիմադրելով՝ վերջն պարտութիւն խոստովանեցան. վասն որոյ ոմանք գորգ՝ ոմանք թաղիք, և՝ ոմանք մահիճ և այլ գոյս փողոց հանելով՝ կվաճառեն՝ աւուր պարէն պատրաստելու. բայց ի ներկայս տեսանելով, թէ օր աւուր ամենայն մարդկային սրտնութիւնք չափազանց կբարձրանան գնով, որով անշուշտ իւրեանց կենաց կենդանութեան վտանգին ենթարկելոյ կդատապարտուին, բանականի անուն ժառանգել կամեցան. յարեան յիմարութեան թմրութենէն, քանի ինչ գլխաւորք երդուեցան, միացան և ձգեցին իւրեանց հետ նա և չորս հազար անձինս, խորհեցան դառնացան սղութեան գլխաւոր պատճառն համարեցան նահանգական կառավարչին, և թագաւորեցան գԱրկլարբեկին). քանզի սա սաստիկ հրամանաւ հրատարակած էր, թէ քաղաքն հաց բերող անձն անպատիժ չ'պիտի մնայ, որով սովոյն անշուշտ թիկնապահ կհանդիսանայր, հետևապէս նղովեցին զանձինս, ոչ ուտել և ոչ ըմպել մինչև սպանցեն զՍղոմոն սղութեան. բայց իսպառ քաղաքականութեան վարագոյրն պատառել չկամենալով՝ որոշեցին նամակներ կպցնել մզկիթների ճակատն ի զգաստութիւն ոստիկանութեան, և կգրեն այս կերպ ''սովն մեր պարանոցի վերայ կշողացնէ իւր հատու սուրն, բայց դեռ քաջասիրտ եմք, քանի ինչ աւուրց ժամանակ համբերութիւն պաշտելով, որոց մէջ եթէ ատենի վերահասութիւնն և արդարութիւնն՝ հացագործաց անիրաւութիւնն՝ կանոնաւորութեան հրաւիրելոյ յանցանքն ունենայ, յայնժամ արդարութիւն վարկանելով՝ նախամեծար կհամարինք՝ զդատաւորն և մեր զեղբայրներն սրոյ ճարակ տալ և մեր կեանքն նորանցով շահիլ, քան թէ յիմար լռութիւն յարգելով՝ սովու զոհ գնալ. ընտրեցէք բարին. ստորագրութիւն չորս հազար անձանց,,։

Ա յս արդարախառն սպառնալիքն ականի անձինք ներէ ոմանք ընդ առաւօտն տեսանելով՝ անմիջապէս կներկայացնեն նահանգապետի, նա ևս փութապէս մեծ իշխանին (Վալիաթին), որ առանց ժամավաճառ լինելոյ՝ ատեան կկազմէ իւր նախագահութեամբ, ուր զրկելով զԲէկլարբեկին հացագործաց վերահասութեան իրաւունքից՝ կյանձնէ նոյն պաշտօնն նախկին կառավարչէ Արտավիզ քաղաքի արքայազն Մ'ահմմատ Ռահիմ Միրզային քաղաքաշէն անձին, և կհրամայէ երեք հարիւր խալվար յորեան բարձրագոյն Դրան ըշտեմարանէն տալի հացագործաց, լիտր մի ղուան (երեսուն կոպէկ), նմանապէս քանի երևելի ցորենատեր անձանց հրամայվեցաւ նոյնպէս վաճառել իւրեանց ցորեանն մինչև ցնորն, իսկ հացագործք հացի լիտրն վեց Պարսից ապասի վաճառեն հասարակաբար, և այսպէս ատեանն կարձակուի, լուր կհրատարակուի յուրախութիւն սովալլուկ տրտմելից սրտից, և գործադրեցին նոյն հրամանն և կարգադրութիւնն. բայց թէ կանոնի հաստատութիւնն քանի՞ օր կենդանութիւն ունեցաւ՝ չգիտեմ, բայց միայն զայս գիտեմ, որ Արքայազն նոր կառավարիչն մի հացագործը երկու խարդախութեան մէջ միանուագ գտնելով՝ մի լիտր վաճառեալ հացի առթիւ, որոց առաջին կշռոյ պակասութիւնն, և երկրորդն կանոնադրեալ գնոյ սահմանէն առաւելութիւնն էին, սաստիկ զանակոծեց, և մեծամեծ պատժից և տուժից ենթարկել սպառնալով մեկնեցաւ, Թող մեկնի, հոգ չէ, դու աչքդ հացագործի տեսարանին դարձո, դրամով սէրն մարմնոյ տանջանաց ցաւոցն չաղթեց և մոռացնել տուաւ, քանզի դատաւորին քանի ինչ քայլափոխ հետանալէն ետքն նոյն կրկնին խարդախութիւններն վերստին տեղի ունեցան նոյն հացագործի վաճառքին մէջ։

Բայց միւս վարագոյրն, և ահա քեզ ներկայանայ միւս ևս դժբախտ տեսարան. Հարց, Դաւիժոյ հիւսներն ըլ՞նչ կգործեն. դժբախտաբար չար Ցուլիանոսին առած պատասխանն սիտի լսես ''դագաղ կգործեն,,։ և ի՞նչ կարևորութիւն այդքան դագաղի, չաճախորդ շատ են վաճառքներիս, ընկալ քեզ պատասխան՝ վասն զի արջի ճիրանից ազատուածն առջի մարդիները կհանդիպի, ըստ որում՝ սովէ ազատուած դժբախտներն՝ ցրտոյ զոհ կերթան, ցրտէն մնացուորսկէս պատսպարուածներն՝ սովու կմատնուին, որոնք Կուռնոսի համանման՝ կենսախուզ գերանդիքն ձեռքնին բռնած՝ դիմադիր թշնամիէն ապահով, կեանք կհընձեն անողորմաբար, որպիսի տարաբախտութեանց զգալի ցաւոց սաստկութեան քրիստոնէաբար ի գութ շարժելով Ռուսաց և Անգլիացւոց հիւպատոսներն՝ մանաւանդապէս հոգատարութիւն ունեցան նոցա ցաւոցն՝ դրամական օժանդակութեամբ, զոր յաջորդ թուղթն պիտի գրեմ Արարատ պատուական ամսաթերթիդ՝ իբր մեր սիրելի ազգայ-

նոց հրատարակութիւնն խոնարհաբար խնդրելով որպէս և ներկայիս։

Մնացական Սարգսեան.

ի 12 Դեկտեմբերի 1872 ամի
ի Պօլիս։

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇԻՒ
ՄԱՐԴԱՍԻՐ. ԸՆԿ. ՀԱՑՈՑ ԹԱԳՈՒԱՑ.

Լուծագործական Ընկերութեան Ամագրոյ.

Խորհուրդն ժողովոյ բարձրագոյն Հաստատեալ Մարդասիրական Ընկերութեան յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի ի Բագու, համաձայն 26 յօդ. կանոնադրութեան պարտաւոր է իւրաքանչիւր տարի որպէս իւր գործունէութիւն, նմանապէս և դրամական շրջանների համար հաշիւ տալ ընկերութեան բոլոր ի Բագու և տէրութեան միւս քաղաքներում բնակուող անդամոց, ինչպէս ի 25 Յունվարի տարւոյս Խորհրդոյ Անդամք նորակառոյց ընկերութեան ուսումնարանի դասնչճում Բագու գտնուող անդամոց ներկայութեամբ իւր համարատուութեան հանդէսը կատարեց։ Ա՛յս հիման վրայ ես որպէս գանձապետ ընկերութեան, առաքելով ընդ սմին Ընկերութեան ժամանակին մատնից քաղած մանաւանդ տեղեկութիւն նորընտիր անդամոց ընծայաբերութեանց դրամագլուխներից ծագած տոկոսաց և բոլոր ծախուց որ յընթացս 1871 ամի գործ է ածել խորհուրդը բարեգործական նպատակաւ, խնդրում եմ յարգանք տեղի տալ «Արարատ» ամսագրի էջերում տպագրել ի գիտութիւն Հայոց հասարակութեան և ամենայն անդամոց ընկերութեան. իսկ որ ինչ վերաբերի խորհրդոյ անդամոց միւս գործութեանց, խմբագրութիւնը զկնի սորա ունի ստանալ տարեկան հաշիւ նախագահին Խորհրդոյ, որ և նմանապէս պիտի հրատարակուի ի գիտութիւն մեր ազգի հանրութեան։

Գաճնապետ Ընկ. Գրիգոր Թոռոսեանց.

Մարտ 24 ին 1872 ամի
ի Բագու։

Մուտք.

	Ռ.	Կ.
Առ 1 ն Յունվարի 1871 ամի մնացեալ էր զուտ գումար	8771	25
Քառասուն և հինգ հատ խաղարկական բիլէթներ հաշուելով իւրաքանչիւրը 104 ռուբ. 50 կոպ. որպէս գնված է, գումարն է	4702	50
Օրինաւոր մուրհակներով զանազան անձանց վերայ ստանալիք կան . . .	4703	50
Տասն անուխոխս անդամներից անվճար պարտք մնացած է	1000	
Երկու ընտիր նոր մամուլներ իւր Հայոց, Ռուսաց և Թուրքաց տառերով և միւս պէտ պարագայիւք, որք արժեն .	3059	29
Ցընկոյս 1871 ամի ընկերութեան դրամարկղը մնաց է,		
Տասն և ութ հոգի նոր գտնված անփոխոխ անդամներից ընծայաբերութիւն	1800	
Տոկոսիք խաղարկական բիլէթներից .	225	
Տոկոսիք զուտ դրամից	1173	96
Ընկերութեան պատկանեալ ծախուած գրեանքից	6	
Ուսումնարանաց տարեկան հարցաքննութեան օրը խաղացած լատարիայից .	64	70
Ցիսուն և երկու նոր գտնված տարեկան անդամներից ընծայաբերութիւն .	260	
Տպարանից արդիւնք	1554	97
Պարոն Առաքել Ծատուրեանցի ձեռամբ ստացած զանազան մարդկանց ընծայաբերութիւն	68	
Ընդ ամենը	27389	17

Ծանօթ. Ի տեղեկութիւն բոլոր Անդամոց Մարդասիրական ընկերութեան աւելորդ չեմ համարում նշանագրել այս տեղ բոլոր ընկերութեան խաղարկական բիլէթների թուանշանները։

Տոմակ.

Սէր.	979	Նո.	ի 1	ին	25	Տոմս. Հատ.	24
,,	974	,,	13	,,	20	,,	7
,,	979	,,	31	,,	35	,,	4
,,	973	,,	34	,,	42	,,	8
,,	8485				28	,,	1
,,	17154				22	,,	1
						Ընդ ամենը	45

Ծախք.

Ցընկոյս 1871 ամի Օրէրդոյ ուսումնարանի վերայ։

	Ռ.	Կ.
Վարժուհեաց և Վարժապետի համար սահմանեալ վարձ տրուած է . .	922	50
Աւագ Սարկաւագ Փիլոսեանցին վասն վերատեսչութեան և խորհրդոյն ժողովոյ ընկերութեան գործոց կարգապահութեան	107	50
Օրիորդաց ուսումնարանի պահապանին	120	
Օրիորդաց դպրոցի և նորա վարժապետաց համար գնած վառելիքի .	49	53
		53

Աղքատ օրիորդաց համար ագուստի	48	65
Աղքատ ուսանող տղայոց համար գնած գրեանքի	33	32
Ուսումնարանի համար եղեալ մանր ծախք	23	7
Որդեգիրներին Ընկերութեան, որք շարունակում են իւրեանց ուսումը Բագու և Սանկտպետերբուրկ	290	
Տպարանի համար վարձեալ տան տիրոջ տուած է սկսեալ ի 1 մարտի 1870 ամի	200	
Օրիորդաց ուսումնարանի տան տիրոջ տուած է սկսեալ ի 20 յունիսի 1870 ամի	300	
Ծողովրմուրիւն աղքատաց և տնանկաց Հայոց և Ռուս. երկու տարվայ (1871 և 1872) համար ստացեալ և ստանալի օրագրաց	153	10
Փոստայի ծախք	59	77
Կազմարարին Ընկերութեան գրադարանի անշքեղ գրեանց կազմելուն . .	12	
Գրատան համար գնած գարանի (շկաֆ)	50	
Խորհրդարանի գրագրին	20	
Հոգեհանգիստ կատարելոյ վասն ննջեցեալ անդամոց Ընկերութեան . . .	10	
Հեռագրութեանց	10	
Ընկերութեան տպարանի բոլոր որպէս գրաշարներուն նմանապէս միւս գնեալ տպարանական պարագայից վերայ տարեկան ծախք է եղել	1238	20
Ընդ ամենը	3784	64
Ծիշեալ ծախսը եկամտից ի բաց հանելով մնում է առ 1 ն Յունվարի 1872 ամի զուտ գումար	11012	17
45 հատ խաղարկական բիլէթներ	4702	50
Մուրհակներով ստանալիք .	3951	
Ապառիկ ստանալիք Անդամներից	500	
Տպարանի արժողութիւնն այժմ	3438	86
	23604	53
	27389	17

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆՔ ԱՆՊԱՏՄԱՐ ԱՂՔԱՏԱՑ.

Երբ Անդղիա Դաւրիժոյ մահաւրէթ սովու լուրն լսեց՝ մարդասիրաբար ի գումէր շարժելով՝ երեք Հարիւր պարսից Թուման օժանդակութիւն ուղարկեց ինպատաց աղքատաց տեղոյս, իւր քաղաքիս Հիւպատոսի ձեռամբ նոցա մանատրելոյ համար. ուստի հեռատես Անդղիական Ճոնս տեղոյս գերապատիւ և աղգասէր Առաջնորդէն Հայ աղքատաց ցուցակն հանդերձ շնչագրութեամբ խնդրելով՝ ստացաւ, զոր մի Հարիւր յիսուն Թուման հնդ յանձնելով տեղոյս աղքատաց հոգատարութեան մանաժողովոյն անդամոց՝ բաժանել հրամայեց, իսկ միւս մի Հարիւր յիսունն Պարսից աղքատաց, ուստի ընտրեալ անձինքն անմիջապէս կատարուցին այս փրկաւէտ հրամանն. Անդղիական հիւպատոսն բաւական չհամարելով իւրեանց կայսրութեան կողմանէ լիաձեռն ողորմութիւնն՝ վերստին իւր մարդասիրական ողորմութեան սիրոյ հողմով ծածանող դրօշն աղքատաց կենաց փրկութեան վերայ պարզել կամեցաւ, փութացաւ, տումար կազմեց, և թէ մերազնեայ և թէ քրիստոնեայ եղբարցն ստորագրել տուաւ, գումարն ստացաւ, որով չորս Հարիւր Թուման բաղկացաւ, վասն որոյ հետևաբար դրամատոր օժանդակութեան դուռն բացուեցաւ, կոչեց իւր մօտ մանաժողովոյն անդամներն, որոց պաշտօնին ևս կցորդ առնելով զՔասթելի անուն Հելուետիացին, յանձնեց նոցա զայն չորս Հարիւր Թումանն՝ ապահովապէս մատնատրել տաճիկ աղքատաց, վասն որոյ և նոքա այս Հնարքն կհնարեն, ուր խարդախութիւնն յայտ չանդիման կիայտառակուի, եթէ յիմարաբար Պիջամտէ. կ կոչեն նոցա թաղապետներն, որոցմէ կ պահանջեն իւրեանց թաղի աղքատաց ցուցակն շնչագրութեամբ հանդերձ, և կը բերեն. իսկ անդամք իւրաքանչիւր աղքատաց անուամբ տումակներ կը գրեն իւրեանց Հասանելի դրամոց քանակութեամբ, ըստ ցուցակաց, և կ դարձնեն թաղապետաց. որոնցից աղքատներն ստանալով իւրեանց անուանական տումակներն՝ կ ներկայացնեն Պարոն Քասթելիին, և իւրեանց յատկացած դրամներն ընդունելով՝ և օրհնելով բարերարաց կեանքն՝ կերթան իւրեանց թշուառ զաւակներն հոգալոյ. որք քաղցու զօրութենէն ընկճած՝ թալկացած դիմօք գորովագութ հօր աղիքն կըկիզուին.

Ցորմէ՝ Ցարգոյ խմբագիր, Է զի Հաւատարմագ միջնորդութեամբ և Է զի անձնաւորապէս տեսանելով Ռուսական Հիւպատոսն Դաւրիժոյ՝ ինքն ևս ի նախանձ բարի կշարժի ըստ բանին Առաքելոյն, թէ ‹‹ նախանձաւորք լերուք շնորհացն՝ որք լաւքն են ››. վասն որոյ իւր սեփական դրամովն տասն խալուար ցորեան և վեց խալուար ածուխ առնելով՝ կամեցաւ կցորդ լինել թշուառաց օգնականութեան, ուստի իւրեան դիմող սովալուկ աղքատներն թէ Հայ և թէ Պարսիկ՝ կ միխիթարէ Հայրաբար. ցորեանն Հացի փոխանակելով Հացագործի Հետ. տումակներն կցրուէ աղքատաց ըստ շնչոյ, որք ունելով ի ձեռին՝ կ ներկայանան Հացագործին՝ իւրեանց օրական պարեն ստանալու, ոմանք մի լիտր, ոմանք կէս, ոմանք մի քառորդ լիտր. նմանապէս և ածուխն. որով՝ արդարացի խօսելով, բազումք իւրեանց կեանքն շահելով քաղցու ձեռքէն՝ կ խնամուին բարեսիրտ Հիւպատոսի գթութեան և Հովանաւորութեան տակ. որպիսի բարերարութեանց լոյս հրատարակութիւնն կ խնդրեմ աղօթատու Արարատ ամսագրով.

Ա՝նաստասիոս Այրիվանեան.

Ի 19 Փետրվարի 1872 ամ. ի Դաւրիժ.